ԱՐՁԱԳԱՆՔ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ | № 5 | ԿԻՐԱԿԻ 14 ԱՊՐԻԼԻ 1891

Ներկայ 1891 թ. Մարտից մինչև 1892 Յունվարի 1-ը բաժանորդագինն է ՈՒԹ ռուբլի կամ 30 ֆրանկ։ Բաժանորդագրութիւնն ընդունվում է խմբագրատանը՝ Թիֆլիզ Վէլիամինովսկի փողոց, քաղաքային Խորհրդատան հանդէպ։ Ուրիշ տեղերից պէտք է դիմել՝ Тифлисъ, Редакція Армянскаго Иллюстрированнаго журнала „АРДЗАГАНКЪ". Արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal arménien illustré „A R D Z A G A N G"

Առանձին համարի գինը 30 կ. Յայտարարութեան բառին 4 կ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ։—Մեծ Իշխանուհի Օլգա Փէօդօրովնա։ ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։—Վեհափառ Կաթուղիկոսի հրամանը։ Նորին Մեծութիւն Թագաւոր Կայսեր նուէրը։ Թիֆլիզի քաղ. արհ. ուսումնարան։ Ղոգենաւ Տիգրիս և Եփրատ դետերի վրայ։ Բժշկապետի կոչում։ Օր. Կալիպսոյ։ „Նախթար"։ „Փաթմա և Ասադ"։ Նիւ-Եօրքի հայերը։ Ինչս կարօտ գալթ. օգնող ընկ.։ Հայ. Բարեգ. Ընկ.։ Թումչեվ։ Առ հայ օրիորդս։ Հայոց Բարեգ. Ընկ. շրջաբ.։ „Հայուհի"։ Հազուագիւտ ժողովածու։ ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ։—„Նիւթեր ազգային պատմութեան համար"։ ՓԻԼԻՒՏՕՆ։—Թէ ինչպէս հրեշտակը մեղաւոր դարձաւ։ Մի դաս պատմութիւնից։ Կարծիքներ ժողովելու մի նոր միջոց։ ԶԱՆԱԶԱՆ։—Ինչ է մտածում գլխատուածը։ Համալսարանների ուսանողութիւն։ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՄԵԾ ԻՇԽԱՆՈՒՀԻ ՕԼԳԱ ՓԷՕԴՕՐՕՎՆԱ

Երկուշաբթի, ապրիլի 1-ին կայծակի արագութեամբ տարածուեցաւ Թիֆլիզում Նորին Կայսերական Բարձրութիւն Մեծ Իշխանուհի Օլգա Փեօդօրովնայի մահուան տխուր բօթը՝ անասելի ցաւ պատճառելով բովանդակ ազգաբնակութեան։

Հազիւ 24 տարեկան հասակում ժամանելով 1863 թուի փետրուարի 14-ին մեր երկիրը իր Բարձր Ամուսնու հետ, որ Կովկասի փոխարքայ էր նշանակուած և 18 տարի մնալով այստեղ Մեծ Իշխանուհին առաքինութեան բազմաթիւ գործեր է կատարել դաստիարակութեան, բարեգործութեան, մարդասիրութեան ասպարէզներում։ Մի ամբողջ շարք ուսումնարանական հաստատութիւնների կանանց կրթութեան համար՝ Թիֆլիզում, Լէքսանդրապօլում, Քութայիսում, Վլադիկավկազում, Ջաքաթալում, ասպա Կովկասեան մանկաբարձուհիների դպրոցը հիմնուել են նորա նախաձեռնութեամբ և բարգաւաճման աստիճանին հասել նորա խնամքներով։ Ի տէր հանդուցեալ Մեծ Իշխանուհին՝ բազէնի մեծ դուքս Լեօպօլդի դուստրը ծնուել է 1839 թուի սեպտեմբերի 8-ին և ուրեմն կնքել է իր մահկանացուն 52 տարեկան հասակը չբոլորած. ամուսնացել է Նորին Կայսերական Բարձրութիւն Մեծ Իշխան Միխայիլ Նիկօլաեւիչի հետ 1857 թուի օգոստոսի 16-ին, պարգևելով Կայսերական Տանը մի դուստր, որ ամուսնացած է Մեկլէնբուրգ—Շվերինի մեծ դուքսի հետ և հինգ զաւակ, որոնք սրընւել ու կրթուել են մեր երկրում։

1881-ին Նորին Բարձրութիւնը թողեց մեր երկիրը և ապրում էր Պետերբուրգ, ուր Նորա Ամուսինը կոչուած էր պետական խորհրդի նախագահի պաշտօնը վարելու։

Մեծ Իշխանուհու մահը մի անփոխարինելի կորուստ է Կովկասի համար, որ այնքան սիրելի էր Նորին Բարձրութեան սրտին, և որի ազգաբնակութիւնն այնպիսի անսահման աէր և այնպիսի խոր յարգանք էր տածում պէպի նախկին փոխարքայի Օգոստափառ Ամուսինը, որ հեռանալով իսկ այստեղից, մի գթառատ մայր էր ամենքի համար, ով մեր երկրից դիմում էր Նորա Բարձր Հովանաւորութեանը։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Խմբագրութիւնիցս անկախ պատճառներով «Ըղձաղանք»-ի ներկայ համարը լոյս է տեսնում անցեալ կիրակի օրուայ փոխարէն այսօր։

***

Հայ-լուսաւորչականներին արքունական հիմնարկութիւններում և դատարաններում երդում տալու խնդրի առթիւ Նորին Վեհափառութիւն ամենայն Հայոց Կաթողիկոսը առանձին հրահանգով հրամայել է բոլոր թեմական առաջնորդներին՝ յայտնել իրանց թեմերին, որ Հայ-լուսաւորչականները պէտք է երդում ուտեն բացառապէս հայերէն լեզուով։ Այն հոգևոր անձինք, որ կրնախատեն Վեհափառ Կաթողիկոսի այս հրամանը, կ'ենթարկուին պատժի։

***

Նորին Վեհութիւն Թագաւոր Կայսրը Մոսկուայի Հնագիտական Ընկերութեանը 10,000 ռուբլի է նուիրել Կովկասում հնագիտական հետազօտութիւններ և ուսումնասիրութիւններ շարունակելու համար։ Նոյն նպատակով Նորին Վեհութիւնը այդ Ընկերութեանն արդէն քսանուհինգ հազար ռուբլի ևս տուած է։

***

Վրաց «Իվերիա» լրագիրը լսել է, որ մտադրութիւն կայ՝ «Թիֆ. քաղաք. արհեստաւորաց ուսումնարանի» երեք բաժանմունքները (հայոց, վրաց և ռուսաց) միացնելու, ուր դասախօսութիւնը պէտք է աւանդուի ռուսաց լեզուով։

***

Ներքոհմանի մի հայ լրագրում կարդում ենք հետևեալը.

—Տիգրիս և Եփրատ գետերին վրայ շոգենաւ բանեցնելու մասին պննութիւններ կատարելու համար Սուլթանի Անձնական դանձուն նախարարութիւնը (որին կը պատկանի այդ գետերի վրայ շոգենաւ բանեցնելու մենաշնորհը) Ֆրանսացի երկրաչափներ պրկած էր այն գետեր քննելու. ասոնք քննութենէ ետք այն եզրակացութեան եկած են թէ արդէն մինչև Պաղտատ շոգենաւ բանեցնելը մինչև ցարդ կարելի եղած է, իսկ Պաղտատէն մինչև Հալէպ՝ Եփրատ գետը կրնայ նաւարկելի լինել ջրերի նուազութեան եղանակին ալ, եթէ ինչ ինչ արհեստական գործողութիւններ կատարուին։ Պաղտատէն մինչև Մուսուլ ալ նաւարկելի անելու համար, Տիգրիսի մէջ տեղ տեղ քարեր կան, որոնք պէտք է հանել և գետը մաքրել. գործողութիւն մի որ փիչ ժամանակի մէջ կրնայ աւարտիլ։

***

Ռուսաց Հասարակաց Կրթութեան նախարարութեան մէջ և բժշկական խորհրդում կազմուած էին երկու յատուկ յանձնաժողովներ, ուր քննվում էր բժշկապետի կոչում ստանալու հարցը։ Ներկայումս, ինչպէս հաղորդում են լրագրները, այդ յանձնաժողովներն այն կարծիքն են յայտնել, թէ անհրաժեշտ է փոխել ներկայումս բժշկապետի (գօկտօր մեդիցինի) ընդհանուր կոչումը և սրա փոխարէն մտցնել բժշկապետի կոչում ըստ մասնագիտութեան։ Այնպէս որ այսուհետև ընդհանուր բժշկապետներ չեն լինիլ, այլ «բժշկապետ, ակուշէր, ներքին հիւանդութիւնների» և այլն։ Բոլոր մասնագիտութիւնների թիւը որոշուած է 10։ Այս հարցի վճռելուն կը մասնակցին և բժշկական բաժանմունքները։

***

Վերջերս Կ. Պօլսի «Արևելք» լրագրում կայնատոյ ոտոպագրութեամբ մի երկու յօդուած երևեցաւ, որոնցից մէկը՝ «Աւ հայ օրիորդս» վերնագրով յառաջ ենք բերում շաբաթաթերթիս ներկայ համարում, ցանկալով մի տեսակ ճաշակ տալ և ճանաչացնել մեզնից Կ. Պօլսի Հայ հասարակութեան գեղեցիկ սեռի օրիորդ ներկայացուցչների պաղատարների հետ ևս։ Համակրելով հեղինակի արտայայտած մրտքերին՝ մենք ուզում ենք հաւատալ, թէ Ոդիսևսի բարեկամ պիցուհու կեղծ անունան տակ ծածկուողը իրաւ՝ հայ գեղեցիկ սեռին պատկանող մի անձն է, և ոչ թէ կեղծեալ մի Պենատոր. . .

***

Կ. Պօլսում պարսկերէն լեզուով հրատարակուող «Ախթար» լրագիրն անորոշ ժամանակով դադարեցրած է, «Նօվ. Աբազբենիե» լրագրի ասելով։ Պատճառն այն է, որ Պարսից կառավարութիւնն արդելել է այդ լրագրի մուտքը Պարսկաստան։ Որովհետև «Ախթարի» ընթերցողների մեծ մասը պարսիկներ են, ուստի խմբագրութիւնը բաժանորդների սակաւութեան պատճառով այլ ևս միջոց չունի իւր լրագիրը հրատարակելու։ «Ախթարի» մուտքը Պարսկաստան արգելուած էր այն պատճառով, որ այդ լրագիրը մի շարք յօդուածներով յարձակվում էր Իմինուս Սուլթանի ներկայ տնտեսական քաղաքականութեան վրայ։

***

Մեզ հաղորդում են, թէ արդէն թարգմանուել է ռուսերէն լեզուով և շուտով լոյս կը տեսնէ մեր աշխատակից պ. Զիլվանզադէի «Փաթմա և Ասադ» վէպիկը պարսկական կեանքից։ Պ. Զիլվանզադէի այդ վէպիկը 1889 թուականին տպուեց «Ըղձադանքում», իսկ նրա մի մասը թարգմանաբար տպուեց պարսկաց «Քէշկիւլ» լրագրում։ Վէպիկի ռուսերէն թարգմանիչն է պ. Ալ. Ջաքարեան։

***

—Նիւ-Եորք քաղաքի Հայերը փափագելով հայ եկեղեցական պաշտամունք կիրակի օրեր իրենց մէջ ալ կատարել տալ, մի յանձնաժողով ընտրած են այդ խնդիրը կարգադրելու համար։ Յանձնաժողովը Նիւ-Եորքի անգլիական եկեղեցւոյ եպիսկոպոս Գեր. Տ. Բոդդրին պիտած է, խնդրելով որ իր թեմին մէջ գտնուող եկեղեցիներէն մին, կիրակի օրեր մի քանի ժամի համար, Հայերի տրամադրութեան տակ դնէ։ Գեր. եպիսկոպոսը սիրով ընդուներ է նոցա խնդիրք և գրաւոր պատասխաներ է որ իր այդ յանձնարարագիր նամակով դիմեն քաղաքի քարոզիչներին և անոնցմէ իմանան թէ ո՛ր եկեղեցին շաբաթու մէջ այդ ժամանակ ազատ կը լինի Հայերին տրուելու համար։ Ս. Ոսկեբերան եկեղեցուն քարոզիչը յանձն առեր է Հայերի փափագը կատարել մասնաւոր կարգադրութեամբ և ասկէ ետք կիրակի օրեր 2½ ժամի չափ Հայերը պիտի կրնան այդ եկեղեցին երթալ և կատարել իրենց եկեղեցական պաշտամունքը։ Գեր. Տօքթոր Հովիւն Հայր Սարաճեան ալ 2 ամիսը անգամ մը պիտի այցելէ զիրենք և պատարագ անէ նոյն եկեղեցւոյն մէջ»։

***

Դատ կարօտեալ գաղթականներին օգնող Ընկերութեան Յանձնաժողովը խընդրում է մեզ տպել հետևեալը.

«Գարունը մօտենալիս Թուսաստանի շատ կողմերում սկսվում է մի գաղթական շարժում։ Վերջին տարիների փաստերը ցոյց են տալիս, որ տարէց տարի այդ շարժման չափը

և կարօտեալ գաղթականների թիւն աւելանում է։ Անցեալ տարի միայն Տիւմենի վրայով անցել են 36,000-ից աւելի մարդ։ Սրանց մեծամասնութիւնը եղել են ծայրայեղ կարօտութեան մէջ։ Ամենափոքր, բայց ժամանակին հասցրած, օգնութիւնը այդ մարդկանց մեծ նշանակութիւն ունի։

Ահա այս պատճառով կարօտեալ գաղթականներին օգնող Ընկերութեան Յանձնաժողովը յայտնում է իւ գիտութիւն ամենքի, որ Ընկերութեան իսկական անդամների տարեկան անդամավճարն է տասը ռուբլի, իսկ մշտական անդամի վճարն է միանուագ հարիւր և յիսուն ռուբլի։ Դրամական և իրեղէնների նուէրները, նոյնպէս և բոլոր ազդարարութիւնները Յանձնաժողովիս անունով ընդունվում են «Կարօտեալ գաղթականներին օգնող Ընկերութեան գրասենեակում»—Ս. Պետերբուրգ, Նեվսկիյ պրօսպեկտ № 65»։

***

Անցեալ շաբաթ, մարտի 30-ին, Թիֆլիզի արքունական թատրոնում աւելի ունեցանք լսել ջութակահար տասը տարեկան Կոստիա Դումչեւի կօնցերտը։ Թատրոնի փոքրաթիւ հասարակութիւնը բուռն ծափահարութիւններով ընդունեց բաւական առողջ դէմքով, խելացի և գեղեցիկ աչքերով մի մանուկ, որ բեմ դուրս եկաւ չափահաս մարդու համարձակութեամբ։ Տաղանդաւոր մանուկը հէնց առաջին նուագումով արտայայտեց, որ Հասարակութեան առաջ կանգնած է երաժշտական ապագայ փայլուն աստղերից մինը։ Նա այդ երեկոյ նուագեց տասը՝ բաւականին լուրջ երաժշտական կտորներ, և գրեթէ բոլորը լաւ տպաւորութիւն գործեց Հասարակութեան վրայ, որ մի քանի կտորներ կրկնել տուեց մանուկ երաժշտին։ Մի բան որ զարմացրեց մեզ, այդ նրա ահագին երաժշտական յիշողութիւնն է, որ և գրաւել է մայրաքաղաքի լրագրների ուշադրութիւնը։ Պակաս զարմանալի չէ և նրա տեխնիկան, չընայելով Հասակին, նրա մատներն արդէն այնքան զարգացած են, որ նուագում են ագատ և անսխալ։ Դումչեւը, ինչպէս ասում են, ինքնուս է։ Ներկայումս նա ճանապարհորդելով Ռուսաստանում կօնցերտներ է տալիս, և միջոց ձեռք բերելուց յետոյ նա մտադիր է կանոնաւոր երաժշտական ուսում առնել։

Դումչեւի երկրորդ կօնցերտը տեղի ունեցաւ անցեալ կիրակի, ապրիլի 7-ին արքունական թատրոնում։

***

ԱՒ ՀԱՅ ՕՐԻՈՐԴԱՍ

«Հայ աղջկանց կեանքէն» յօդուածս այն ինչ ելած էր ի հրատարակութիւն, և ահա պայրութէ դառնացեալ հազարաւոր սրտեր՝ իրենց լեզին թափեցին վրաս. . . հազարաւոր բերաններ՝ գիս չանդուգն կոչեցին, և մեղադրեցին թէ փոխանակ պաշտպանելու գհայ աղջկունս, ես՝ որ հայ աղջիկ մըն էի, անոնց թերութիւններն ի վեր հանած եմ. . .։

Սակայն կը հարցնեմ ձեզ, ո ղիւրազգաց ընկերուհիներս, գրիչը ճշմարտութեան գործիքն ըլլալու է թէ ստութեան... իրաւունց գործիքն ըլլալու է նա թէ շողոքորթութեան...։ Գիտցէ՛ք, ազնիւ օրիորդք, թէ Կալիպսոյ հայ աղջկանց թերութիւններն ի վեր հանելով՝ միևնոյն ժամանակ իր թերութիւններն ալ ի վեր կը հանէր. անոնց վրայ ցաւելով՝ իր վրայ ալ կը ցաւէր. զի ինքն ալ կարևորութիւն չէր տար երբեմն տան կառավարութեան, տնական գործերու։ Ինքն ալ կը կարծէր թէ ուսումն և երաժշտութիւնը գերապանց են քան զամենայն, և մնացեալն, այսինքն տնարարութիւնը, ոչինչ է...։

Ինքն ալ կը խորհէր, թէ «...» կարդալը ինչ վնաս ունի աղջկան մը համար. ընդհակառակն աւելի լաւ և օգտակար է այն՝ «...» կեանքի վաթսար կողմերը ցոյց տալով աղջիկանց, կը յորդորէ գանոնք ատել չարն, և բարւոյն, ճշմարտին, գեղեցկին յարել. կը յորդորէ զգոյշ կենալ, և չը քշուիլ կեանքի փորձութեանց հոսանքէն։

Բայց երկար ու լուրջ-խորհրդածութիւններ, դաստուածց ու բարեկամաց լմաստուն խրատներ բաւական եղած են զինքն համոզելու թէ սխալ, շատ սխալ են իր կարծիքներ, և ահա գղջացեալ մըն է Կալիպսոյ. իր հետևած նախկին ծուռ ուղին թողլով, շիտակ ուղւոյն մէջ մտած է արդ. այլևս միայն օգտակար ու լուրջ գրքեր կը կարդայ նէ, կը փափաքի տնտեսագիտութիւն, տնական գործեր սովրել, և պիտի սովրի, զի քաջ համոզուած է թէ որքան անհրաժեշտ է աղջկան մը համար՝ շատ օրիորդաց «...» թուոզ այդ գիտելիք։

Գալով այն բուռն եռանդին՝ յորմէ մղեալ գրել էի այն «...» տողեր, գլխաւոր պատճառ մը ունի. այսինքն թէ, հայ աղջկանց թերութիւններն արդէն արական սեռին ուշադրութեան մեծ առարկայքն եղած ըլլալով, կը վախնայի թէ մի՛ գուցէ օր մը արական սեռը գրէ հայ աղջկանց կեանքէն. և միթէ աւելի ծանր չպիտի՛ գար մեր սրտին, և մեր հպարտութիւնը աւելի չպիտի՛ վիրաւորուէր տեսնելով թէ արական սեռն է որ մատնանիշ կընէ մեր թերութիւններ. նա ի լոյս կ՛ածէ մեր կեանքի տկար կողմեր, և ինչ պատասխանել կայնժամ այդ իրաւացի դիտողութեան... Ոչինչ կը մնար մեզ ընել բայց եթէ գլուխնիս խոնարհեցնել այդ ծանր հարուածի տակ...

Ո՛չ, սիրելի՛ք, աւելի լաւ է որ մեք հայ աղջկունս, մեր կեանքի բարւոքման խնդիրը մեր մէջ լուծենք. մեր թերութիւնները մեք մեզէն զգալով ուղղենք, առանց սպասելու որ ուրիշները զգացնեն մեզ զայն։

Ցատեր ալ պարմանալի հարցում մը ըրին ինձ. ըսին թէ չօդուածիս վերջին մասը արդեօք միայն ազքատիկ դասին համար գրել եմ. զի ըստ իրենց կարծեաց՝ ազքատիկ աղջիկները միայն պարտաւոր են տնական գործերու գբաղիլ, անոնց համար միայն աւելորդ է երաժշտութիւն սովրելը. և թէ հարուստ աղջիկները բազմաթիւ ծառայներ ունենալով՝ հարկ չկայ որ տնական գործեր կամ տնարարութիւն սովրին և անարգել կրնան իրենց հաճելի թուոզ ճիւղին աշխատիլ՝ կամ դիտութեանց, կամ գեղարուեստի և այլն և այլն։

Այդպիսեաց կը պատասխանեմ թէ, Կալիպսոյ երբէք չգիտէ խոիր դնել ազքատին և հարուստին միջև, նէ ամենուն համար ալ խօսած է հաւասարապէս. և հարուստ աղջկանց կը բաւականանայ յիշեցնելով, թէ Անգղիոյ Վեհ. Թագուհին իսկ տնտեսագիտութիւն կը սովրեցնէր իր աղջկանց. և կ՛աւելցնէ թէ, հրամայելու համար ալ գիտնալ պէտք է։ Եթէ տնտեսագիտութիւն չգիտնալով ամեն ինչ ծառայից ձեռքը թողուն, վայ իրենց տան, զի մօտ է կործանումը...

Փորձով իսկ գիտեմ թէ քանի՛ քանի հարուստ ընտանիքներ ազքատութեան վիհը գլորած են տնարարութիւն չը գիտնալնուն պատճառաւ, և անիծած են այն օրը՝ յորում դատապարտելի անհոգութեամբ զանց առել են զայդ կարևոր գիտելիք։

Ազքատ աղջկանց համար կըսեմ թէ տնարարութիւնը՝ տաժանելի ազքատութիւնը՝ գիւրաթար կ՛ընէ. իսկ հարուստ աղջկանց ալ կը ըսեմ, թէ տնարարութիւնը՝ հարստութիւնը ապահով և բարւոք վիճակի մէջ կը պահէ։

Խնայայ թէ շատ հայ աղջիկներ մտադիր են գէմ գրել ինձ. թող գրեն, ամեն մարդ ազատ է իր կարծիքը յայտնելու. սակայն կը ցաւիմ որ քիչեր պիտի ունենան հաւնող իրենց կարծեաց, զի ճշմարտութիւնն է միայն որ շատ կողմնակիցներ կը համրէ, և ես՝ ճշմարիտը իւօսած եմ։

Գալով ինձ, ոչինչ կրնայ կասեցնել զիս գրելէ հայ աղջկանց կեանքէն։ Հայ աղջիկ ըլլալովս, հայ աղջկանց կեանքը լաւ ուսումնասիրելովս, քաջ հասկցած եմ թէ որքան կարօտ է այդ կեանք բարւոքման։ Ո՛ գիտէ... Թերևս օր մը իմ տկար ձայնս արձագանք գտնէ նորելուկ հայ աղջկանց սրտերու մէջ, թերևս հայ աղջկանց կեանքի բարւոքման հիմերէն մին ալ ես դնելու բարերաղդութիւնը կ՛ունենամ ապագային, և ահ. . . այս պիտի ըլլայ Կալիպսոյի միակ փառքն ու պարծանքը։

ԿԱԼԻՊՍՈՅ

«Տուք զկայսերն կայսեր և զԱստուծոյն Աստուծոյ»:

(Պատկեր Տիցիանոյ Վէչէլլիի—իտալացի հռչակաւոր նկարչ.-պատկերահան 16-րդ դարու):

Մարտի 31-ին, կիւրակէ օրը, պէտք է կայանար Թիֆլիզի «Հայո–Հայ Բարեգոր-ծական Ընկերու–Թիւն» տարեկան ընդհանուր ժողովը. ժամի 12-ին ուր որ Նշան եկեղեցում կատարուեցաւ ընկերութեան հանգուցեալ բարերարների հոգեհանգիստը. պատարագին երգում էին նոյն եկեղեցու գաւթում եղած և ընկերութեան հաշուով պահպանած օրիորդաց ճեմական դպրոցի աշակերտուհիները: Հոգեհանգիստը վերջացնելուց յետոյ ժողովականները հաւաքուեցան դպրոցի դահլիճը և ընկերութեան ատենադպիր պ. Քիշմիշեանը կարդաց սրբազան առաջնորդից ուղարկուած թուղթը, որով սրբազանը այն ժողովին նախագահելու պաշտօնը յանձնում էր Տէր-Գէորգ քահանայ Գալոստեանին: Սակայն ներկայ եղող անդամների թիւը պակաս լինելով ընկերութեան կանոնադրութեան պահանջած պատշաճ թուից, ժողովը յետաձգուեց և տեղի կ'ունենայ այսօր: Ըստ էն մեր ձեռքը լինելով այդ համակրելի ընկերութեան տարեկան հաշիւը, չենք կարող մեր գոհունակութիւնը չյայտնել ընկերութեան վարչութեան եռանդուն գործունէութեան վերաբերմամբ. 1890 թուի ընթացքում ընկերութիւնը մուտք է ունեցել 794 մանէթ նուիրաբերութիւններից, 1612 մանէթ անդամակցական վճարներից 1368 մանէթ պարահանդէսից, ներկայացումից և կոնցէրտից, 615 մ. տոկոսիք ընկերութեան դումարից, 274 մ. աշակերտուհիներից, 1338 մ. կարուձևի դպրոցի սպառուէրներից, 113 մ. ձեռագործի վաճառումից—ընդամենը մօտ 6116 մ., որ մի պատկառելի գումար կ'երևայ, եթէ համեմատենք մեր մնացեալ ընկերութիւնների տարեկան մուտքի հետ:

Ընկերութիւնը իր հաշուով պահում է սուրբ Նշան եկեղեցւոյ ճեմական դպրոցը և կարուձևի ուսումնարանը:

Կանանց ընկերութիւնն ունի քառասուն և եօթը (47) մշտական և 152 խոհական անդամ – ուրեմն ընդամենը 199-ը: Մշտական անդամներից 3 Մոսկուայից են, 2 Բաղուից, 1 Թէլաւից, իսկ մնացած 41-ը Թիֆլիզից: Խոհական անդամներից 2 Մոսկուայից և մէկ մէկ Բաղուից, Կարսից և Ախալցխայից, իսկ մնացածը Թիֆլիզից:

***

Այսօր տալիս ենք մեր ընթերցողներին «Հայուհի» (Die Armenierin) մեծադիր պատկերը, որ պատկանում է հռչակաւոր նկարիչ Մելլերի վրձինին: Բնագիրը գտնւում է Բրիւսսէլում և կազմում է պ. Չօլլինգերի մատնաւոր ոճականութիւնը: Այս պատկերը, որի լուսանկար պատճէննե-րը բաւականին տարածուած են Եւրոպա-յում և համարուած է այնտեղ Հայուհու իսկական տիպը, մեր պատկերով ընդօրինակել է Թերթիս համար ամենայն ճշտութեամբ նկարիչ պ. Պօղոս Տէր-Ա-տուածատուրեանցը:

***

Մեզ հաղորդում են որ բժիշկ Լևոն Տիգրանեանը (նախկին խմբագիր «Առողջապահական Թերթի») նուիրել է Կայսերական Թուսաց Երաժշտական Ընկերութեան Կովկասեան բաժնին մի հազուագիւտ ժողովածու հայկական գործիքների, որ յարգելի բժիշկը ձեռք է բերել գլխաւորապէս Երևանի նահանգում:

***

Կովկասեան Հայոց Բարեգործական Ընկերութեան Խորհուրդը՝ ուղարկելով մեզ իւր տեղական վարչութիւններին ուղղուած շրջաբերականի պատճէնը, խնդրում է մեզ գետեղել այդ գրութիւնը մեր շաբաթաթերթում: Ահաւասիկ՝

—Վերջին ժամանակներս մեր հասարակութեան շրջաններում և լրագրների էջերում լսւում են և տպւում Հայոց Բարեգործական Ընկերութեան գործունէութեան վերաբերմամբ մի քանի նկատողութիւններ, որոնցով պախարակւում է ընկերութեան անտարբերութիւնը դէպի մասնաւոր աղքատներին օգնելու գործը:

Իրաքանչիւր մի նոր դէպքից, մի նոր թշուառ ու մուրացկան երեւոյթ չի շեշտում են հասարակութեանը, որ Բարեգործական Ընկերութիւնն անուշադիր է դէպի իւր պարտականութիւնները:

Արդեօք այդ այդպէս է: Արդեօք Ընկերութեան վերայ պէտք է լինի այդպիսի յարձակում:

Ոչ ոք՝ ի հարկէ՝ չի ժխտիլ, որ աղքատներին և չքաւորներին օգնելը, երբ նա դուռաձ է հաստատ հիմքի վերայ, կարգաւորուած է և գործադրում է պիտակցաբար—կարող է մեծ ծառայութիւն մատուցանել հասարակութեան: Ժամանակին հասած օգնութիւնը կարող է ամբողջ ընտանիքներ ազատել կորչուտից և թշուառութիւնից: Մի առանձին ընկերութիւն, կամ հաստատութիւն այդ տեսակ նպատակով—շատ ցանկալի կլինէր և կվայելէր ընդհանուր համակրանք:

Սակայն Հայոց Բարեգործական Ընկերութիւնը, որչափ և համակրէր այդ նպատակին, չէ կարող շեղուել այն կանոնադրութիւնից, որով նա գոյութիւն ունի: Ընկերութեան նախագծողներն ունեցել են իրանց յարգելի որոշ տեսակէտները և նպատակը նորա գործունէութեան վերաբերմամբ և ամփոփել են հետևեալ կէտերում.—

ա) օգնում է ուսումնարաններին.

բ) օժանդակում է արհեստների տարածման.

գ) օգնում է ուսանողներին և աշակերտներին.

դ) լոյս է ընծայում գրքեր և այլն.

ե) հիմնարկում է տպարաններ, վիմագրատներ և ընթերցարաններ.

զ) հիմնում է հիւանդանոցներ և այլն.

է) օգնում է տառապեալներին ժողովրդական թշուառութիւնների ժամանակ.

ը) նպաստում է ազգօգուտ ընկերութիւնների:

Այստեղ օգնութիւն հասցնել նիւթականապէս որոշւում է միայն ժողովրդական հանուր աղէտների ժամանակ: Ընկերութեան անդամներից շատերը մինչև անգամ այնքան բառացի են ցանկանում հասկանալ այս վերջին կէտը, որ թէ ընդհանուր ժողովների ժամանակ և թէ մասնաւոր խօսակցութիւնների միջոցին՝ առաջարկում են խոպան հանել նպաստառուներից տառապեալներին տրուելիք դումարը: Եւ բնաորոշ է, որ Ընկերութեան ընդհանուր ժողովներում, ուր եղել են զանազան տեսակէտի մարդիկ և խմբագրութիւնների ներկայացուցիչներ, երբէք խօսք չէ եղել այդ դումարը մեծացնելու մասին, այլ ընդհակառակն եղել է քիչացնելու և խոպան ոչնչացնելու մասին:

Այս այսպէս լինելուց յետոյ բոլորովին անտեղի են այն յարձակումները, որոնք կատարւում են Ընկերութեան գործունէութեան շատակուած կէտի վերաբերմամբ:

Ընկերութեան Խորհուրդը դիտէ շատ դէպքեր, երբ խմբագրութիւններ, քահանաներ և մասնաւոր անձեր ուղարկել են իրանց մօտ եկած աղքատներին և կարօտեալներին դէպի Հայոց Բարեգործական Ընկերութեան Խորհրդարանը, մատնացոյց լինելով, որ օգնութեան աղբիւրն այնտեղ է: Այդ հանգամանքը Խորհրդին դնում է դժուար կացութեան մէջ, որովհետև սա ստիպուած է լինում մերժել բազմաթիւ մարդկանց, որոնց զուր տեղը միայն յուսադրել են:

Խորհուրդը կարևոր համարեց տալ ներկայ բացատրութիւնը, որպէսզի առաջն առնուած լինի զանազան տարակուսութիւնների և թիւրիմացութիւնների, որոնցով զուր տեղը վնասւում է Ընկերութեան այն գործունէութիւնը, որ որոշուած է կանոնադրութիւնով:—

Նախագահ Խորհրդի՝ Ա. Առաքելով

Քարտուղար Ա. Մ. Եղիազով

***

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

«Նիւթեր ազգային պատմութեան Հայոց մասին։ Երեւելի Հայկազունք ի Պարսկաստան։ Աշխատասիրութեամբ Գալուստ Ջերմազանեանի։ Պատկեալ Սահակ-Մեսրոբեան մրցանակաւ ի գործադիր մնայուն Յանձնաժողովոյն Կոստանդնուպոլսոյ, ըստ կտակի բարեյիշատակ Յովսէփեան Իմմիւրեանց։ Թոստով (Պօսնի վերայ). տպարան Յ. Տէր-Աբրահամեան, 1891», եր. 400 գինն 5 ռուբլի։

Ինչպէս յառաջաբանում կարդում ենք՝ հեղինակը նպատակ ունի կենսագրական — պատմական նիւթեր պատրաստել այն հայկազունների մասին, որոնք իրանց քաջագործութիւններով ու հանճարով Պարսկաստանում նշանաւոր են հանդիսացել քաղաքական, պատերազմական և տնտեսական ասպարէզներում։ Այս նիւթերը հեղինակը հաւաքել է ականատեսների և ժամանակակիցների բերանացի պատմութիւններից, կաթողիկոսների կոնդակներից, մասնաւոր նամակներից, օրագրներից, «Կաջարների պատմութիւնից» և վերջապէս ռուսերէն լեզուով տպուած զանազան պատմական աղբիւրներից։ Հեղինակն այս նիւթերն հաւաքելիս է եղել 1832 թուից սկսեալ, երբ առաջին անգամ Թաւրէզ է գնացել, և պատրաստած է եղել մօտ 60 անձի կենսագրական ընդարձակ նիւթեր, բայց 1865 թ. յունիսի 28-ին Թիֆլիսում պատահած ծանօթ արկածի ժամանակ, ի թիւս հեղինակի մեծ աշխատութիւնների և հին ձեռագրերին, ոչնչացել և անյայտացել են այս նիւթերն ևս։ 1873 թուից սկսեալ հեղինակը Պարսկաստանում ճանապարհորդելիս նորից հետամուտ է եղել իր սիրելի գործին — կենսագրութիւններ հաւաքելուն — միևնոյն աղբիւրներից. բայց այս անգամ, որովհետև «հին և ծերունի մարդկանց շատերն արդէն կամ մեռած էին և կամ բացակայ (հեռաւոր) նահանգներում էին գտնվում»՝ իւր ձեռնարկութիւնը չէ կարողացել կատարելագործել առաջինին նման. այս անգամ նա կարողացել է հաւաքել միայն 38 անձի կենսագրութիւններ, որոց մէջ ևս, «համեմատելով նախկին հաւաքածներին հետ... դարձեալ շատ և շատ պակասութիւններ կան». բայց հեղինակը որոշել է հրատարակել այս նիւթերը, որովհետև յոյս չէ ունեցել, որ սպասելով կարողանար այսուհետև լրացնել այդ թերութիւնները։

Թէպէտ հեղինակը նպատակ է ունեցել ազգային պատմութեան համար նիւթեր տալ՝ հայկազունների կեսագրութիւնների միջոցով, բայց մեր կարծիքով այդ նպատակին լիովին չէ հասել. պատմական նիւթերը պատմական ճշտութիւն պէտք է ունենան և քաղուած սիրտի լինեն այնպիսի աղբիւրներից, որոց ստուգութիւնն անտարակուսելի լինի. այն ինչ այս գրքի մի քանի աղբիւրները — բերանացի հաւաքուած և «Կաջարների պատմութիւնից» քաղուածները, շատ կասկածելի են արժանահաւատութեան կողմից։ Յիրաւի, մի՛թէ կարելի է վստահիլ և իբրև պատմական նիւթ ընդունել ծերունիների բերանացի պատմածը մօտ 100 տ. առաջ կատարուած դէպքերի և անձերի մասին, կարող էին նոքա չիշել մանրամասնութիւնները, տեղը, ժամանակը, մանաւանդ եթէ իրանք էս պատմում են «լսովի» և ոչ իբրև ականատես. ինչ ապացոյց կայ, թէ նոքա այս ինչ դիպուածը սխալմամբ չեն վերագրում մի ուրիշ անձի, այն ինչ իսկապէս դրողն այդ անձը չէ եղել։ Զենք ասում և այն, թէ այդ ծերունիները կարող էին և կամայական սխալներ անել—չափազանց դովել կամ պարսաւել մի անձնաւորութիւն յայտնի դիտումով։ Աւելի արժանահաւատ չէ, մեր կարծիքով, և «Կաջարների պատմութիւնը», որ, ինչպէս ընդհանուր սովորութիւն է պարսիկներին մէջ, աւելի սերճախօսութեան ձևով է պատմում դէպքերը, քան բուն պատմական ոճով, և որի հեղինակը Միրզայ-Թալի, պ. Ջերմազանեանի վկայութեամբ, հայ և վրացի կոչումները գործածում է անխտրաբար, միևնոյն անձը երբեմն հայ և երբեմն վրացի անուանելով, որովհետև հայն էլ, վրացին էլ «խաչապաշտ են և մէկ երկրում, միասին են բնակում», և որը «տոհմանուններից (ֆամիլեա) բնաւ հասկացողութիւն չունի»։ Ուրեմն և այսպիսի հեղինակի յօրինած պատմութիւնն էլ չէ կարող համարուիլ արժանահաւատ աղբիւր «նիւթերի» համար։ Դժբաղդաբար հեղինակը այնպիսի ուղղութիւն է բռնել իւր «նիւթերը» կազմելիս, որ բոլոր գիրքն արժանահաւատութեան կողմից կասկածի տակ է ընկնում, որովհետև մի անձնաւորութեան մասին տեղեկութիւններ քաղում է այլ և այլ աղբիւրներից, «մասնաւոր թղթակցութիւններից, հրամանագրերից, ժամանակակիցներից «և մարտակից ականատեսներից», և երբ հասնում է այս կէտին, ուր «Կաջարների պատմութիւնը» չիշում է այն անձանց անունները՝ այնուհետև ձեռնամուխ է լինում չիշեալ պատմութիւնից քաղուածք անելով՝ առաջ խաղալ»։ Ուրեմն ստոյգ և կասկածելի աղբիւրներից հիւսուած են այս կենսագրութիւնները, և ընթերցողը չէ կարող գուշակել, թէ կենսագրութեան որ մասը աւելի արժանահաւատ է և որ մասը կասկածելի, որովհետև հեղինակը, ցաւալի պանցառութեամբ, չէ նշանակել յիսկանէ յառնուանէ իւր աղբիւրները, իւրաքանչիւր դիպուած նկարագրելիս, որ անհրաժեշտ պայման է պատմական գրուածքի մէջ, մանաւանդ եթէ պորա աղբիւրներն այնքան տարբերուում են միմեանցից իրանց ստուգութեան կողմից։

Սակայն թէպէտ այս գիրքն, ինչպէս ասացինք, ազգային պատմութեան նիւթեր լինելու չափ արժանահաւատութիւն չունի՝ բայց ամենաթանկագին և պատուական նիւթեր է պարունակում Պարսկաստանի և պարսկաբնակ հայերի ազգագրութեան նկատմամբ. այդ աշխարհի սովորութիւնները, բարքն ու վարքը, յարաբերութիւններն այլ և այլ դասակարգների ու այլ և այլ ազգութիւնների մէջ, քաղաքական, զինուորական ու տնտեսական կեանքի մէջ տիրող արևելեան հանգամանքներն, բաղդի այն գահավիժութիւնները, որով մի սոսկ մարդ առաւօտեան դէմ բարձրադոյն աստիճանի է տիրանում, իսկ երեկոյին նոյն իսկ իւր սեփական գլխից զրկուում... այս բոլորն այնպիսի ճիշտ տեղական գոյներով են նկարագրուած, որ այդ գիրքը բոլոր իրաւամբ կարելի է կոչել Պարսկաստանի ներքին կեանքի և ազգագրութեան առատ և ստուգապատում աղբիւր։ Եւ հեղինակն այստեղ բնազդումով լաւ է գտացել իւր կոչումը—լուսանկարել կեանքն իւր բոլոր մերկութեամբ, գրի առնել տեսածը, լսածը, կարդացածը։ Կարող են որ և է պատմուած դիպուածի մէջ սխալ լինել գործող անձերի անունները, տեղը, ժամանակը, պատճառն և այլն, ուրեմն այդ դիպուածը կարող է պատմական ճշտութիւն չունենալ, բայց բուն եղելութիւնը և նորա հետաքրքրական մանրամասնութիւնները բոլորովին ստոյգ են, տեղական բոլոր յատկանիշները կրում են իրանց մէջ, և եթէ մինչև իսկ եղելութիւնն էլ իրապէս կատարուած չլիներ՝ բայց արդէն այս հանգամանքը, որ այդպիսի բան կարող է պատմուիլ իբրև եղած՝ արդէն բաւական է՝ այդ երկրի կարգերի ու սովորութիւնների մասին որոշ դաղափար կազմելու համար։ Օրինակ, շահի գանձարանից կորչում է մի տոպրակ ոսկի, 30 հազար թումանի արժէքով (մօտ 85 հազար ռուբլի), որչափ փնտրում են գողը, որչափ կալանաւորութիւններ, տանջանքներ և ուրիշ միջոցներ են գործածում՝ գողը չէ գտնուում. կասկած են տանում թագաժառանգի և պալատի հայ ներքինու վերայ, բայց չեն կարողանում հաստատել, այնպէս էլ գործը վերջանում է։ Ժամանակ անցնելուց յետոյ երկու հայ ասպակահատներ միմեանց հետ կռւում են արբեցութեան ժամանակ և գնում մատնում են միմեանց. յայտնուում են շահի ոսկիների գողերը, որոնք խոստովանում են իրանց արածը և պատմում են գործի հանգամանքները։ Շահը հրամայում է չարչարել և տանջել գոցա և ոսկիները պահանջել, միևնոյն ժամանակ հրովարտակ է գրում Սպահանի խանին, որ Նոր Ջուղայի հայերից առնէ այն 30 հազար թումանը և նրանց սրով կոտորէ։ Խանը հայ Ջոհրաբ խանի խնդրով՝ չէ գործադրում այդ հրովարտակը և չէ էլ յայտնում դորա մասին ոչ ոքի, «քանզի գիտէր, որ եթէ սրիկաները լսէին... իսկ և իսկ կյարձակուէին ու քարուքանդ կանէիք զՋուղայն»։ Վորձը վերջանում է սորանով, որ 22 հազար թումանի արժող մի ադամանդ նուիրում են շահին և նրանից առնում են հայերի համար ազատութեան թուղթ կամ բաշխագիր (48—51)։ Ահա մի դիպուած, որի ստուգութիւնը անտարակուսելի է Պարսից պատմութեան փոքր ի շատէ ծանօթներին, և որը իւր բոլոր մանրամասնութիւններով որոշ դաղափար է տալիս մեզ պարսկական կեանքի ու սովորու-

թիւնների մասին։ Եւ այսպիսի դիպուածներ գրքում հարիւրաւորներ կան, որոնք լոյս աշխարհ հանելով պ. Զերմազանեանը շատ օգտակար ծառայութիւն է մատուցել պարսկական կեանքի և ազգագրութեան մատենագրութեան, և երևի արժանաւոր կերպով կգնահատուէր եւրոպացիներից, եթէ թարգմանուէր որ և է եւրոպական լեզուով։

Հեղինակի լեզուի մասին չենք խօսում — պ. Զերմազանեանի լեզուն արդէն յայտնի է և իւր բոլոր հնաբանութեամբ, գաւառաբանութեամբ, քերականական ու ոճաբանական սխալներով ներկայացնում է այն ժամանակը, երբ աշխարհաբարը նոր էր սկսել գրականական լեզու դառնալ, և աշխարհաբարեաններն իսկ գրաբարին վճարում էին լեզուահարկ, դրելով մի լեզուով, որ իսկապէս լեզուախառնուրդ էր։

Չենք կարող սկայն ուշադրութիւն չդարձնել տպագրական բազմաթիւ սխալներին վրայ, որոնք իւրաքանչիւր երեսի վրայ պատահում են առատութեամբ։ Գուցէ այսպիսի տպագրական սխալ լինի և գրքի դինը 5 ռուբլի, այլապէս չենք հասկանում, ինչ խորհուրդ կայ տպագրել մի գիրք, բայց արգելել նորա ընթերցանութիւնը — անհամեմատ բարձր դին նշանակելով։ Յիշելու ենք մանաւանդ, որ այդ գրուածքն Իգմիրեան մրցանակն ստացած լինելով՝ արդէն հոգւոյն էր իւր տպագրութեան ծախսը, ուրեմն և աւելի մատչելի գնով պիտի ծախուէր։

Ստ. Մ.

ՖԵԼԻԵՏՕՆ

ԹԷ ԻՆՉՈ՞Ւ ՀՐԵՇՏԱԿԸ ՄԵՂԱՒՈՐ ԴԱՐՁԱՒ

(Պարսկական առասպել)

Հարձրագոյն դրախտի զով ճեմելիներից նայելով կիսալուսնի արծաթեայ լուսով օծուած երկրին, երեք հրեշտակներ — Ջաֆարը, Ալին ու Հուսէյինը հանդարտ խօսակցում էին մեր մեղաւոր աշխարհի մասին։ Ծաղիկների վրայ թռչկոտող մեղուի պէս սահում էր նրանց երեսների վրայ անմեղ ուրախութեան ճառագայթը, որ արտայայտում էր քաղցր ժպիտ, մեղմ բաղդաւորութիւն և անսահման սէր դէպի միմեանց։

Միայն Հուսէյինն էր մռայլուած մի ինչ-որ մտքով և խօսակցութեան ժամանակ չէր նայում իւր ընկերներին։ Նա իւր գեղեցիկ երեսը յետ էր դարձնում, հոգսերով ծանրացած գլուխը դնում էր ձեռների վրայ և տխրամած ճակատով խորին ուշադրութեամբ նայում էր մեր երկրին։

Ջաֆարը և Ալին գգում էին պարզ, որ նրանց բարեկամ Հուսէյինը ձգտում է թափանցել Ալլահի անթափանցելի գաղտնիքները, փորձում է իւր խելքով հասկանալ, թէ ինչպէս է Ամենակարողը ստեղծել աշխարհը, թէ ինչու երկրի վրայ չկայ այնպիսի դրախտային ստուեր, այնպիսի անուշահոտութիւն, որպէս իւր շուրջը, թէ ինչու այնտեղ քիչ է առատութիւնը, չկայ այն սէրը, որ տիրում է հրեշտակների մէջ։ Այո, ինչու երկրի գոյնը ցերեկն աւելի մութն է, քան լուսնի լուսով, և ինչու Ալլահը ինքն անձամբ չէ իջել երկրի վրայ, այլ Մահամմէդին է յանձնել բոլոր գործերը։

Հուսէյինը չափշտակուած էր երկիրը գննելով, իսկ Ջաֆար և Ալի հրեշտակները լուռ դիտում էին նրան։

— Ջաֆար, շշնջաց Ալին իւր ընկերոջ ականջին, մի թէ կարելի բան է, որ Հուսէյինը այսչափ ափսոսայ աշխարհի մասին։ Նայիր՝ նրա աչքերից արտասուքի երկու խոշոր կաթիլներ ընկան ներքև, մեղաւոր երկրի վրայ։ Արդեօք լաւ չի լինիլ, հեռու քաշուինք այս ծայրից և մտնենք դրախտի մէջ տեղում գտնուող հովանոցը։ Հուսէյինին էլ տանենք այստեղից, եթէ ոչ նա կըլսանգարէ մեր հրեշտակային անդորրութիւնը։ Կարելի բան է դրախտում տրտմել և արտասուել։

— Իմ բարեկամ, Ալի, — ասաց Ջաֆարը, եկ, աւելի լաւն է, հարցնենք նրա տրտմութեան պատճառը։ — Սրտակից բարեկամ, դարձաւ նա Հուսէյինին, — սիրելի եղբայր, իմ ծաղիկս, իմ աչքի լոյս, մի թէ դու աշխարհի մասին ես այդպէս տրտմում։

— Ջաֆար, պատասխանեց Հուսէյինը, — ո՛հ, իմ վսեմ բարեկամ, իմ հոգոյս հաստոր, կեանքիս անուշութիւն, թանկագին թանկագիններից, դրախտի գեղեցկութիւնդ և հպարտութիւնդ, մի անլուծելի խնդիր ինձ անհանգըստացնում է։ Ասա, ինչպէս բացատրել, որ երկրի երեսում այդքան շատ է մեղաւորների թիւը։ Նայիր, ուր որ գնում ես, ուր որ մտիկ ես անում, ամենքը՝ թէ ուղղափառ մահամմեդականներ, թէ ֆրանգը, թէ ռուսը, ամենքը մի բան միայն ունին — մեղք և մեղք... ինչով բացատրել ..

— Հուսէյին, քո դիտող խելքը զրկում է քեզ դրախտի զուարճութիւններից։ Ի՞նչ գործ ունինք մենք աշխարհի մեղաւորների հետ։ Ալլահը և Մահամմէդը արել են այն, ինչ որ հարկաւոր է, և մենք ոչինչ տանչութիւն չունինք երկրի հետ։

— Այդ ձեւ ես ասում այդ խօսքերը, — յանկարծ լսուեց թփերի ետևից Ալլահի ձայնը։

Ջաֆարը դողդողաց, Հուսէյինը շփոթուեց, բայց նոյն րոպէին, ձայնը բարձրացնելով, Ջաֆարի փոխարէն պատասխանեց.

— Համայն ուղղադատանների Ամենակարող և Մեծ Աստուած, ասա, ինչու մարդկանց մէջ այդքան շատ է մեղքը։ Ահա, առաջին օրը չէ, որ ես այդ մասին մտածում եմ և չեմ կարողանում լուծել խնդիրը։ Արդեօք չի՞ կարելի մարդկանց հեռու պահել սպանիչ կրքերից։ Արդեօք չի՞ կարելի այնպէս անել, որ մեղքեր չըլինին. . .

Հուսէյինը խօսքը չէր աւարտել, երբ գգաց, որ այնտեղ թփերի ետևից, ուր Աստուած էր, կարծես լսուեց մի ծիծաղ ու յետոյ, իբրև արձագանգ, լսուեց մի որոշ ծիծաղ իւր ետևում։ Հուսէյինը յետ նայեց և տեսաւ... ինքը մարգարէն նրա ետևում ծիծաղում էր, իսկ Մահամմէդին հետևելով, ծիծաղում էին և՛ Ջաֆար ու Ալի հրեշտակները։

Մահամմէդի ծիծաղը Հուսէյինին, կարծես, սրի հարուած տուեց։

— Սպրիր դու էլ մարդկանց մէջ, դու հրեշտակդ, և կըզատնաս այնպէս մեղաւոր, ինչպէս բոլորը, — արտասանեց Ալլահը թփերի ետևից, իսկ Մահամմէդը, շարունակ ծիծաղելով, աւելացրեց.

Հապա, փորձիր. . .

* * *

Արդէն երեք օր էր, որ Հուսէյինն ապրում էր Ամուլում։ Ձէր հատանում նա աշխարհը։ Արեգակի կիզիչ ճառագայթներից թագնուելու տեղ չկար։ Ամեն տեղ կեղտոտ, տխուր և անհրապուրելի։ Ծաղիկներն առանց անուշահոտութեան, բոլոր պտուղներն առանց քաղցրութեան, իսկ ջուրը և՛ պղտոր և՛ անհամ։ Ճնաղիկները և՛ տխուր և՛ չխօսկան. ոչ մէկի երեսի վրայ նա չէր նկատում ժպիտ։ Բոլորը շտապում են մի որ և է տեղ, մինչև անգամ մի հաչեցք էլ չդցելով Հուսէյինի վրայ։ Միայն քաղաքի ծայրում, մի այգու ցանկապատի ետևում, նա տեսաւ մի դէմք, որ այն պահից մնաց նրա յիշողութեան մէջ, այնչափ ամուր դրոշմուած, ինչպէս մարգարէի երեսը նոյն վայրկեանին, երբ վերջինս ասաց.

«Հապա, փորձիր»։

Հուսէյինն տիրեց մի անմիտ կիրք։ Գեղեցիկ Ձէյիան նրա մտքից դուրս էր մղել բոլոր ցընորքները դրախտի մասին, որի հիւրինները ոչինչ էին այդ երկրային գեղեցկուհու համեմատ։ Ձէյիայի համար նա պատրաստ էր մնալ այդ կեղտոտ, տօթալի և փոշիով լի Ամուլում, Ձէյիայի համար նա կարող էր երբէք չը վերադառնալ իւր բարեկամների՝ Ջաֆարի և Ալիի մօտ, բացի Ձէյիայից նրա համար ոչինչ չկայ, առանց Ձէյիայի չկայ նրա համար դրախտ։ Ձէյիան ուրախալի գարուն է, Ձէյիան բարիք է, Ձէյիան նրա բաղդաւորութիւնն է, նրա յաւիտանակը։ Քնքուշ և քաղցր շրթունքներ, եղեգնի պէս ճկուն իրան, մարգարտեայ ատամներ և սև պիշերային խաւարի պէս սև աչքեր, ահա որտեղ էր Հուսէյինի ամբողջ աշխարհը, ահա նրա սրտի բերկրութիւնը, ահա նրա բաղդի ճառագայթները։

«Օհ, Ձէյիա, Ձէյիա, իմ անգին Ձէյիա», կրկոտ շշնջում էր Հուսէյինը, թափառելով այգու շուրջը և աշխատելով մի կերպ այնտեղ մտնել կամ ցանկապատի միջով մի քանի խօսք ասել նրան։

Մի անգամ Հուսէյինը նկատեց, որ Ձէյիան շատ մօտիկ է ցանկապատին և խորին ուշադրութեամբ մտիկ է անում դէպի դուրս և... միայնակ է։ Համարձակութեամբ և պերճախօսութեամբ վառուած վճռական քայլերով մօտեցաւ ցանկապատին։

ТИФЛИСЪ, ЛИТ. ЯКШАТА

ՀԱՅՈՒՀԻ

(Պատկեր Մ֊ի֊լլերի)

—Կեանքիս հրեշտակ, սրտիս թագուհի, ո՛հ, Զէյիա—երկնային պարգև, լսիր, մի՛ արտաքսիլ ինձ։

Զէյիան, վախեցած ինչպէս մի անտառային եղջերու, գեղեցիկ, ինչպէս փաղիշահի վարդը, տեղը մնաց սառած։

—Ո՞վ է ինձ կանչում։

—Ես, Հուսէյինը, քո ստրուկը... որին Ալլահը պարգևել է քեզ նման մի անգին նուէր։ Ո՞վ ես դու, իմ սրտի տիրուհի։

Զէյիան յանկարծ կարմրեց, նրա աչքերը փայլեցին ինչպէս Դամասկոսի դաշոյն։

—Ես Սէյիդ-Էֆէնդիի երրորդ ամուսինն եմ։

—Ո՛հ, դժբաղդս,—գոչեց Հուսէյինը և հրատապ կրքով նայելով Զէյիային, իւր ձեռներով երեսը ծածկեց։

Արտասուքի երկու այնպիսի կաթիլներ, ինչպէս այն ժամանակ դրախտում — ընկան Հուսէյինի աչքերից և ադամանդի պէս պըսպըղացին կանանչ մետաքսանման խոտի վրայ։ Զէյիան շշնջաց։

—Իմ աէրս վաղը լուսինը դուրս դալու ժամանակ ուղևորուելու է Ֆաթ-Ալի-Նադիր խանին հանդիպելու... Այստեղ, այս քարի վրայ դրած կը լինի ցանկապատի բանալին...

Եւ Զէյիան անյայտացաւ։

***

Հուսէյինը կրքից այրվում էր։ Զէյիայի շունչը նրա վրայ ազդել էր, որպէս Դալիանի թանձր ծուխ։ Նրա ամեն մի աչքը առանձնապէս երկու կողմից ծակում էր Հուսէյնի սիրտը թունաւոր նետերով, նրա այտերի կարմրութիւնը այրում էր Հուսէյնին, իսկ կիսաբաց բերանը ցոյց տալով ուղիղ, փայլուն և սպիտակ ատամների շարքը — աւելի գրգռում էր նրան։

—Զէյիա, իմ կեանքի ուրախութիւն, երկրի արև, իմ խելքի լոյս, ես չեմ կարող առանց քեզ ապրել, եղիր իմը, օ, Զէյիա...

—Ես քոնը կը լինեմ, եթէ դու կը գործես երեք մեղքերից մէկը։ Ահա, կամ գինի խմիր, կամ սպանիր այն Ծերունի ծառային, որ կարող է մեզ մատնել, կամ այրիր Ղուրանը։

Եւ Զէյիան նրա առաջ դրեց գինի, Ղուրանը և մատով ցոյց տուեց դուռը, որի եաւումն էր Ծերունի ծառան։

Հուսէյինին թւաց, թէ մի տեղից նրա լսելիքին հասաւ Ջաֆարի և Ալիի ծիծաղը, այն ծիծաղը, որ նա լսել էր դրախտում։ Նա մի վայրկեան խորհեց, չիշելով իւր վիշտը մարդկանց մեղքերի համար, իսկ այժմ... Մարդ սպանել — ինչո՞ւ համար մեղք է գինի խմել — մեղք է։ Իսկ այրել Ղօրանը—օօ, այդ նա երբեք չի կարող անել։

—Համաձայն ես,—անհամբեր հարցրեց Զէյիան, կայծակի պէս՝ պսպղացնելով իւր աչքերը։

—Ես կը խմեմ գինի,—արտասանեց Հուսէյինը և միանգամից դատարկեց շիշը։

Զէյիան մօտեցրեց նրան իւր երեսը, և նրանց շրթունքները ճուլուեցին և դարձան մի կրքոտ երկարատև համբոյր....

Հուսէյինին թւում էր, թէ ինքը այրվում է երկու կրակից. մէկը այրում էր նրան ներսից, միւսը խանձում էր դրսից, բայց այդ այրումը քաղցր էր։ Նա կամենում էր, որ իրան այրեն այդ երկու խարոյկների մէջ յապաղ, յապաղ և ամբողջ կեանքը, ամբողջ յաւիտենականութիւն... Բայց ահա նրա աչքերը մթնեցին, ինչ-որ հրային շրջաններ պսպղում էին նրանց շուրջը, շրթունքներն այրվում էին Զէյիայի համբոյրներից։ Արթնանում էին ինչ-որ տակաւին նրան անյայտ զգայմունքներ, որտեղից որ է եկաւ տարօրինակ ոյժ մի հոսանք։ Նա ցանկանում էր ջարդել, ճնշել, սպանել մէկին, արթնացել էին նրա մէջ քաջութիւնը և անվեհերութիւնը... Նրա գլուխը պտտվում էր, մտքերը խառնակվում էին, նրա ներսը այրվում էր... Եւ պղում էր Հուսէյինը, թէ ինքը, կարծես, Զէյիայի ննջարանումը չէ, երկրի վրայ չէ, այլ օրօրվում է ծովի ալիքների մէջ։ Մերթ քաղցր անդորրութիւն, նիրհ, մերթ կատաղի զգայմունքների հոսանք, բուռն ցանկութիւն գտնել այն թշնամիներին, որ սպասում են լսել նրա ձեռքից Զէյիային, որին նա համարեա խեղդում էր իւր գրկում, անընդհատ համբուրելով...

—Հուսէյին, ժամանակ է, որ դու գնաս... Ծառան...

Հուսէյինը մի վայրկենում սլացաւ դէպի դուները, խորտակեց և խելայեղ, տակաւին բորբոքուած զգայմունքներով և հազիւ ոտքի վրայ կանգնելով վինու ապդեցութիւնից—ցցեց դանակը Ծերունի ծառայի կրծքի մէջ։ Վերադառնալով յետ, նա չկարողացաւ անտարբեր նայել Ղուրանին և, վերցնելով, պատռտեց նրան, կտոր կտոր արաւ և թերթերը ձգեց կրակի մէջ, ասելով.

—Թուղթ է և թանաք, ուրիշ ոչինչ, ինչ մեղք կայ այստեղ։

Եւ երերուելով նա նորից մօտեցաւ Զէյիային, համբուրեց նրան, գրկեց, բայց արդէն թուլացած եւանդով։ Նա բոլորովին հարբել էր։

***

Երբ Հուսէյինը վարթեց, տեսաւ որ ինքը ընկած է քաղաքից դուրս, լոտի վրայ։ Նրա գլուխը ցաւում էր, նա ամբողջ մարմնով դողում էր ինչպէս տենդից։ Մի քանի րոպէ անցաւ, մինչև որ նրա չիշողութիւնը վերականգնեց։ Եւ նոր չիշելով իւր կատարած մեղքերը, նա ձեռները խփեց գլխին, երբ լսուեց մի խլացուցիչ որոտումն և սև ծիծաղ։

—Հապա, փորձիր։

Հուսէյինը ճանաչեց այդ ձայնը, որ լսել էր դրախտում այն օրը, երբ նա տանջուելով մեղաւոր աշխարհի մասին, վճռեց ցած գալ, որպէս զի լիացնէ իւր հետաքրքրութիւնը և հանգստացնի իւր սիրտը։ Նա կրեթէ անգգայ թաւալուել էր գետնի վրայ, երբ միմեանց ետեւից մի քանի կենդանացուցիչ հեղուկի երկու կաթիլներ ընկան երկնքից նրա ճակատի վրայ և նրան արթնացրին։ Դա Ջաֆարի և Ալիի արտասուքն էր։ Երկու հրեշտակներ, դրախտում լալիս էին ոչ թէ ամբողջ մեղաւոր աշխարհի, այլ միայն իրանց ընկերոջ՝ Հուսէյինի մեղքի համար։

(«Ա. Լ.»)

ՄԻ ԴԱՍ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՑ

Պարսից Զահի Վեհափառ կաթուղիկոսին գրած նամակը, ուր կաթուղիկոսաց կաթուղիկոս տիտղոսն էր տրուած՝ առիթ տուեց լրագրութեան մէջ մի քանի նախատողութիւնների և մասամբ փոքրիկ վէճի թէ այդ տիտղոսի վերաբերմամբ և թէ Սսի ու Աղթամարի կաթուղիկոսների։ Ուստի աւելորդ չէր լինիլ մի քանի խօսք ասել այդ խնդրի մասին՝ դիմելով մեր ազգային պատմութեանը, որի գիտութիւնը՝ ոմանք յաւակնութիւն ունին միայն իրանց ընծայելու։

Ս. Գրիգոր Լուսաւորչից սկսած Արշակունեաց թագաւորութեան ժամանակ կաթուղիկոսական աթոռը Հաստատուելով Էջմիածնում՝ շարունակուեցաւ մնալ այդտեղ մինչև մարզպանների ժամանակ. Դուինը լինելով մարզպանանիստ քաղաք՝ կաթուղիկոսական աթոռն ևս փոխադրուեցաւ Դուին (453 թ.) և մնաց այդ քաղաքում թէ մարզպանների և թէ արաբացի ոստիկանների ժամանակ։ Բագրատունեաց թագաւորութեան սկիզբներում, երբ Հայոց երկիրը Ատրպատականի ոստիկանների սրից սրեան մէջ էր լողում, երբ կաթուղիկոսները և թագաւորներն այս ու այն տեղ էին փախչում ու թագչում՝ աւերուեցան բազմաթիւ քաղաքներ ու գիւղեր, աւերուեցաւ ու ոստիկանի ծառաների բնակարան դարձաւ և Դըւնի կաթողիկոսարանը. այդ պատճառով կաթուղիկոսական աթոռը մէկ կարճ ժամանակ փոխադրուեցաւ Արծրունեաց թագաւորի մօտ, Աղթամար կղզին (925 թ.) և ապա Վարագ։ Երբ երկիրը սակաւ ինչ անդորրանում է, թագաւորական և կաթուղիկոսական աթոռները հաստատւում են Անի քաղաքում, բայց Անիի կաթուղիկոսարանի անպատրաստութեան պատճառով կաթուղիկոսները մնում են Արգինայում, շատ մօտ թագաւորանիստ Անիին. կաթուղիկոսարանը և Անիի մայր եկեղեցին պատրաստուելով՝ կաթուղիկոսական աթոռն արդէն փոխադրուում

է Անի և մնում է այդտեղ թէ մինչև Բագրատունեաց թագաւորութեան վերջը և թէ նորանից յետոյ մի առժամանակ ևս մինչև Քարսեղ կաթուղիկոսի մահը, եթէ չլիշենք Խաչիկ Բ և Գրիգոր Բ վկայասէր կաթուղիկոսներին, որոնք յոյների և սելճուկեան թուրքերի բռնութիւններից ստիպուած շրջում էին Փոքր-Հայքի և Կիլիկիայի սահմաններում: Բագրատունեաց, Արծրունեաց և Կարսի թագաւորութիւնների վերջանալով՝ Հայոց թագաւորի թագաւորներն ու իշխանական տեղերը նեղուած սելճուկեան թուրքերից քաշւում են հետզհետէ դէպի արևմտեան կողմը, դէպի Փոքր-Հայք և դէպի Տօրոս լեռների ամրութիւնները: Ինչպէս յիշեցինք, նոյնիսկ Խաչիկ Բ և Գրիգոր Բ վկայասէր կաթուղիկոսների ժամանակ կաթուղիկոսական աթոռը շրջում էր յիշեալ տեղերում՝ ոչ հեռու Հայոց թագաւորական և իշխանական տեղերի բնակութեան տեղերից: Բարսեղ կաթուղիկոսի մահից յետոյ՝ երբ արդէն օրէցօր զօրանում էր Կիլիկիայում Ռուբէնեան տեղը՝ Անիից ընդ միշտ հեռանում է կաթուղիկոսական գահը մի ժամանակ Սեաւ լեռան կողմերն ու Տովք դղեակը և ապա հաստատւում է Հռոմկլայում (1147 թ.): Լևոն (իբրև թագաւոր Ա և իբրև իշխան Բ) Մեծագործի ժամանակ Ռուբէնեան տեղը թագաւորութեան աստիճանի հասնելով՝ իւր աթոռը հաստատում է Կիլիկիայի Սիս քաղաքում. ահա Լևոնի թագաւորութեան օրով (1206 թ.) կաթուղիկոսական աթոռը ևս Հռոմկլայից փոխադրւում է Սիս: Կաթուղիկոսական աթոռի տեղից տեղ փոխադրութեան ընդհանուր ակնարկից՝ ինչպէս ընթերցողն արդէն նկատեց՝ կաթուղիկոսական աթոռն առհասարակ կամ անբաժան է եղել հայ իշխանական գահից կամ հետևել է նոցա այն տեղեր, ուր նոքա կենդրոնացած են եղել: Դորանից յետոյ խօսենք մեր յօդուածի բուն խնդրի մասին, այն է՝ Աղթամարի և Սսի կաթուղիկոսական աթոռների՝ մինչև այսօր գոյութեան մասին:

Բարսեղ կաթուղիկոսը իւր մահից մի քանի օր առաջ 1113 թ. Գրիգոր Բ վկայասէր կաթուղիկոսի պատուէրի համաձայն կաթուղիկոսական քօղն ու գաւազանը յանձնելով 20-ամեայ Գրիգորին՝ պատուիրում է իւր մահից յետոյ նորան կաթուղիկոս ձեռնադրել. Գրիգոր կաթուղիկոս օծուելով՝ կոչուեցաւ Գրիգոր Դ Պահլաւունի. Գրիգորի պատանեկան հասակը և մասամբ ընտրութեան ձևը՝ թէ և նա իւր գահին արժանաւոր կաթուղիկոս եղաւ, հեռաւոր հայ ժողովրդի մէջ տարաձայնութիւնների պատճառ դարձաւ. այդ հանգամանքից օգտուելով Աղթամարի Գաւիթ արքեպիսկոպոսը զանազան պատճառաբանութիւններով՝ և գտնելով իրեն կուսակիցներ, կաթուղիկոսացաւ Աղթամարում: Գրիգոր կաթուղիկոսը երկպառակութիւնների առաջն առնելու համար 1114 թ. Սեաւ լեռնում եկեղեցական ժողով է գումարում, ուր ներկայ էին 2000 հոգուց աւելի մարդ: Այդ ժողովում նզովում են Գաւիթի կաթուղիկոսութիւնը և անվաւեր հռչակում. չնայելով դորան Աղթամարի կաթուղիկոսութիւնը շարունակւում է: Կիրակոս Վիրապեցին 1441 թ. կաթուղիկոսանալով Էջմիածնում իւր եպիսկոպոսների և հոգևորականութեան հաւանութեամբ կոնդակով վերցնում է Աղթամարի կաթուղիկոսութեան վերայից Սեաւ լեռան ժողովի նզովքը, որով հաւանութիւն և վաւերականութիւն է տալիս Աղթամարի կաթուղիկոսութեան գոյութեան: Ահա այդ պրսութեան մէջ Աղթամարի կաթուղիկոսութիւնը շարունակւում է մինչև մեր օրերը, որի իշխանութիւնը՝ բացի Վանից, տարածւում է Վանայ լճի շուրջ եղած տեղերի վերայ:

Ինչպէս յիշեցինք Հայոց ընդհանուր կաթուղիկոսութեան գահը Հռոմկլայից տեղափոխուեցաւ Սիս քաղաքը Ռուբէնեան թագաւորութեան գահի մօտ և շարունակուեցաւ մնալ այդտեղ մինչև 1441 թ.: Ռուբէնեան թագաւորութեան՝ Եգիպտոսի մամէլուքների ձեռքով վերջանալուց յետոյ (1375 թ.) կաթուղիկոսական գահը Կիլիկիայում թուրք իշխողների շնորհիւ հետզհետէ հասաւ անփառութեան. այդ այլ հանգամանքներ, ինչպէս են՝ Կիլիկիայից Հայ ժողովրդի հետզհետէ գաղթելն, Հայոց թագաւորութեան վերջանալը և մանաւանդ թէ բուն Հայաստանի կենդրոնից՝ հետևաբար հայ ժողովրդի մեծամասնութիւնից՝ կաթուղիկոսական գահի հեռու լինելը, որ թէ պէտք է հսկէր նորա հոգևոր կեանքի վերայ և թէ այդ թշուառ ժամանակներում իրրև Հայր պէտք է մխիթարիչ լինէր իւր հօտի վշտերին, և վերջապէս ս. Էջմիածնի պատմական նուիրական լինելը՝ իրրև ս. Լուսաւորչի գահը և Հայաստանի եկեղեցիների մայրը՝ ստիպեց արևելեան և արևմտեան Հայ հոգևորականութեան մեծամասնութեանը կաթուղիկոսական աթոռը Սիս քաղաքից փոխադրել ս. Էջմիածին. ուստի 1441 թ. Սսի այդ ժամանակուայ Գրիգոր Բ Մուսաբէկեան կաթուղիկոսին հրաւիրեցին գալ նստել Էջմիածնում. Գրիգոր կաթուղիկոսը չէ համաձայնում գալ ս. Էջմիածին. նոյն թուին ս. Էջմիածնում թէ՛ հոգևորականներից և թէ աշխարհականներից բազմամարդ ժողով են կազմում և ընտրում կաթուղիկոս Կիրակոս Վիրապեցուն: Յոռանանք ասել որ հոգևորականներից շատերը, որոնք չեն կարողանում անձամբ մասնակցել Էջմիածնի ժողովին գրաւոր համաձայնութիւն են տալիս ժողովի ընտրութեանը, այդպիսով Սիսը և Էջմիածինը գատ գատ կաթուղիկոսական աթոռների բաժանուելով՝ շարունակում է մինչև այսօր Սսի կաթուղիկոսութիւնը, որ կոչւում է «Տանն Կիլիկիոյ». այդ ժամանակ Սսի կաթուղիկոսութեան չվերջանալու պատճառն այն է, որ նա ևս ունէր իւր կուսակցութիւնը արևմտեան հոգևորականների մէջ, մանաւանդ Կիլիկիայի հոգևորականութեան մէջ: Պէտք է ասած՝ Էջմիածնի ժողովը և նոյն իսկ նորընտիր Կիրակոս Վիրապեցին Սսից բաժանուելուց յետոյ, այդ աթոռը հակառակ աթոռ և տօլօրինի չեն համարում և չեն հռչակում, այլ ընդհակառակն Կիրակոս Վիրապեցին իւր օրհնութեան և սիրոյ կոնդակով գրած Սսի և Աղթամարի կաթողիկոսներին՝ կարծես հաւանութիւն և գոյութեան իրաւունք է տալիս այդ աթոռներին և հէնց առաջին օրից որոշում է Էջմիածնի կաթողիկոսութեան դիրքը և յարաբերութիւնը դէպի յիշեալ աթոռները: Ազգի ստուար մեծամասնութիւնը սկսած Կիրակոս Վիրապեցի կաթուղիկոսից ընդունելով Էջմիածնի կաթողիկոսութեան ընդհանրական և նախապատիւ լինելը՝ չէ մերժել Աղթամարի, մանաւանդ Սսի՝ մասնաւոր աթոռներ լինելը: Ազգի տրամադրութեան և Կիրակոս Վիրապեցու խաղաղասիրական շաւղով են ընթացել Կիրակոսի յաջորդները, լաւ հասկանալով որ Սսի մասնաւոր կաթողիկոսութեան գոյութիւնը ազգի տարբեր վիճակի ու քաղաքական բաժանման հետևանք է: Եղել են ժամանակներ, երբ Էջմիածնի կաթողիկոսները չեն կարողացել ըստ ամենայն հանգամանաց լրացնել իրենց հեռաւոր հօտի հոգևոր պետոյքները

և մխիթարել մօտիկից ժողովուրդը՝ չընայելով ժամանակ առ ժամանակ Էջմիածնի կաթուղիկոսների նուիրակների շրջագայութեանը զանազան տէրութիւններում ցրուած Հայերի մէջ։ Կիրակոս Վիրապեցու յաջորդներից ու Էջմիածնի կաթուղիկոսներից մեր պատմութեան մէջ իւր գործունէութեամբ, եռանդով և ազդի մխութեան նախանձախնդրութեամբ յայտնի և առաղին տեղը բռնող Փիլիպպոս Աղբակեցին (1632—1655 թ.) Հասկանալով Սսի կաթուղիկոսութեան պատմական գոյութեան անհրաժեշտութիւնը՝ 1651 թուին Երուսաղէմում եկեղեցական ժողով է գումարում, ուր ներկայ են լինում Սսի Ներսէս կաթուղիկոսը և Երուսաղէմի Հայոց պատրիարքը. այդ ժողովում 13 յօդուածով կանոն են հաստատում եկեղեցու ընդհանուր բարեկարգութեան համար։ Այդ ժողովի առաջին յօդուածի առաջին մասն է. «Էջմիածնի և Սսի կաթուղիկոսական աթոռների մէջ սէր և միաբանութիւն լինի...»։ Եթէ Սսի աթոռի գոյութիւնն ապօրինի լինէր, մթթէ Փիլիպպոս կաթուղիկոսը յարաբերութեան մէջ կմտնէր այդ աթոռի հետ և մինչև անդամ ժողով կգումարէր երկու կաթուղիկոսական աթոռների իրաւասութեանց տարածման սահմանները որոշելու. չէ որ Փիլիպպոս կաթուղիկոսն այնքան սիրուած և յարգուած էր բոլոր Հայերից, որ եթէ նա գտնէր Սսի կաթուղիկոսութեան գոյութիւնն ապօրինի, նորան հեշտ էր այդ աթոռը ոչնչացնել։ Պատմական փաստերի խորը չմտնելու համար թէ Էջմիածնի կաթուղիկոսներն իրենց կոնդակներով և այլ միջոցներով յարաբերութեան մէջ են մտել Սսի և Աղթամարի աթոռների հետ և նոցա գահակալներին կաթուղիկոս անուններն են տուել, բաւականանանք յիշել հէնց 1888 թուի ներկայ Վեհափառ կաթուղիկոսի գրած «Ընդհանրական Թուղթը» Հռովմայ պապի շրջաբերականի առթիւ. այդ ընդհանրականը սկսւում է հետևեալ խօսքերով. «Երջանկազարդ կաթուղիկոսաց Տանն Կիլիկիոյ և Աղթամարայ...»։ Էջմիածնի ընդհանրական կաթողիկոսների Սսի Աղթամարի աթոռների հետ ունեցած յարաբերութիւնների մասին մեր ակնարկելու պատճառն այն է, որպէսզի ցոյց տանք Սսի և Աղթամարի աթոռների օրինաւորութիւնը և ոչ հակառակ աթոռ լինելը նոյն իսկ ս. Էջմիածնի կաթողիկոսների կողմից։ Մէկ իշխանութիւն կամ պաշտօնական մարմին եթէ մէկ այլ իշխանութեան կամ պաշտօնական մարմնի օրինաւոր լինելը չէ ընդունում, նորա հետ յարաբերութիւնների մէջ չէ մտնում. եթէ նոյն իսկ սկզբներում յարաբերութիւն ունեցած չէ, բայց յետոյ սկսում է ունենալ, կրնշանակէ նա ընդունում է այդ իշխանութեան օրինաւորութիւնը։ Ութսատտանը չէ ընդունում Բուլղարիայի ներկայ կառավարութեան օրինաւորութիւնը, այդ պատճառով կարել է և իւր պաշտօնական յարաբերութիւնը Բուլղարիայի կառավարութեան հետ։ Ս. Էջմիածնի կաթուղիկոսները սկսած Կիրակոս Վիրապետուց պահպանել են ընդհանրապէս Սսի կաթուղիկոսական գահի հետ յարաբերութիւն, հետևաբար իրաւաբանօրէն ճանաչել են և այդ գահի գոյութիւնն ու օրինաւորութիւնը։

Բացի յիշեալ պատմական և այլ փաստերից՝ Սսի և Աղթամարի կաթուղիկոսական աթոռների գոյութեան և օրինաւորութեան իրաւունք է տուել ներկայ դարու վաթսունական թուականներում հաստատուած Օսմանեան Հայոց Սահմանադրութիւնը։ Այդ սահմանադրութեան հիման վերայ Ազգային վարչութեանն է յանձնուած Տաճկա-Հայոց որոշեալ քաղաքական և կրօնական գործերի կառավարութիւնը. այդ վարչութիւնը, որ ընտրողական է և ներկայացնում է Տաճկա-Հայոց ձայնը՝ չէ ոչնչացրել Սսի և Աղթամարի կաթողիկոսական աթոռները՝ հետևաբար իրաւունք է տուել նոցա գոյութեան, ու լով ընդունել է նոցա օրինաւորութիւնը։

Ս. Էջմիածնի կաթուղիկոսների մէջ Սսի և Աղթամարի կաթողիկոսական աթոռների դէմ եռանդուն կերպով կռիւ է վարել Գէորգ Դ. կաթուղիկոսը, անուանելով դոցա հետեւել և հակառակ աթոռ։ Մեր յօդուածի նեղ սահմանից դուրս լինելով մանրապատում լինելու այդ կռուի շարժառիթների մասին և Օսմանեան Հայոց Ազգային վարչութեան բռնած դիրքը դէպի այդ խնդիրը, այնուամենայնիւ Հարկաւոր է երկու խօսքով յիշել և այդ մասին։ Գէորգ Դ. կաթուղիկոսը իւր կաթուղիկոսութեան Հէնց առաջին տարիներից հետամուտ եղաւ Սսի և Աղթամարի կաթուղիկոսական աթոռների յարաբերութիւններն Էջմիածնի ընդհանրական դահի հետ աւելի կանոնաւորել, այլ խօսքերով՝ այդ կաթուղիկոսութիւնները կամեցաւ բոլորովին ենթարկել Էջմիածնի կաթուղիկոսութեան իրաւասութեանը, բայց ոչ ոչնչացնել. այդ հարցը շարժուեցաւ Պօղոս պատրիարքի օրերում և Խրիմեանի պատրիարքութեան ժամանակ դնալով սուր կերպարանք ստացաւ Գէորգ կաթուղիկոսի, Ազգային վարչութեան և պատրիարքի մէջ. վերջ ի վերջոյ Ազգային վարչութիւնը և պատրիարքը չեն ընդունում Գէորգ կաթուղիկոսի արած խիստ պահանջները, պահպանում են յիշեալ աթոռների գոյութիւնը՝ իբրև մասնաւոր կաթուղիկոսական աթոռներ, որոնք չեն խանգարում Էջմիածնի կաթուղիկոսական աթոռի ամենայն Հայոց և ընդհանրական լինելը. միայն Ազգային վարչութիւնը կանոնաւորում է այդ աթոռների յարաբերութիւնը Ազգային վարչութեան հետ՝ Սսի և Աղթամարի կաթուղիկոսների հաստատութեան իրաւունքը Ազգային վարչութեանը ենթարկելով։ Այդպէս և Սահմանադրութիւնը և պատմութիւնը Սսի կաթուղիկոսական գահը հակառակ աթոռ չեն անուանում, այլ մասնաւոր կաթուղիկոսութիւն, որ հետևանք է մեր պատմական և քաղաքական կեանքի։

Ս. Էջմիածնի կաթուղիկոսութիւնը թէ ընդհանուր Հայութեան կողմից և թէ Տաճկա-Հայոց Սահմանադրութեան հիման վերայ ընդունել է ամենայն Հայոց ընդհանուր կաթուղիկոսական աթոռ. այդ ընդունել են ինքն բսաինքեան Սսի և Աղթամարի կաթուղիկոսները՝ ընդունելով ընդհանուր եկեղեցական և կրօնական խընդիրներում ս. Էջմիածնի կաթուղիկոսական աթոռի բարձր իրաւասութիւնը։ Այդ իսկ հիման վերայ ոչ թէ սխալ պէտք է համարել պարսից Զահն Զահի մեր Վեհափառին կաթուղիկոսաց կաթուղիկոս տիտղոս տալը, այլ և՝ ինչպէս տեսաւ մեր ընթերցողը, բոլորովին իրաւացի և պատմական։

Մ. Ա.

ԿԱՐԾԻՔՆԵՐ ԺՈՂՈՎԵԼՈՒ ՄԻ ՆՈՐ ՄԻՋՈՑ

—

Վերջերս սովորութիւն է դարձել լրագրների մէջ զանազան հարցերի վերաբերմամբ ձայներ ժողովել (plébiscite)։ Այդ կատարւում է երկու կերպ. կամ առաջարկւում է մի որ և է հարց և ապա «այո կամ ոչ» ձայներ են ժողովում և վերջը հրատարակւում են թէ «այո» և թէ «ոչ» ասած ձայների թիւը և կամ

ժողովում են քիչ շատ յայտնի մարդոց կարծիքները՝ հասարակութեանը հետաքրքրող այս ու այն հարցերի վերաբերմամբ, և այս դէպքում պատասխաններն՝ի նկատի են առնում ոչ թէ ըստ քանակութեան (տուած ձայների), այլ ըստ որակութեան։ Մօտերքս այդ օրինակ չորս դէպք տեղի ունեցաւ, որոնցից մէկը Անգղիայում՝ ըստ քանակութեան—իսկ մնացած երեքը—Ամերիկայում՝ ըստ որակութեան։

Առաջին հարցը՝ թէ ո՞րն է այժմ Անգղիայում ամենաժողովրդական վիպասանը—լոյս տեսաւ «London» շաբաթաթերթի էջերում։ Երկու շաբաթուայ ընթացքում 11,370 մարդ ձայն տուեց։ 1,808 ձայնով ժամանակակից անգղիական վիպասան ճանաչուեց օր. Ռէդդօնը, որ գրել է բազմաթիւ արդիւնաւոր, թէև երկրորդական, բայց ազդու և հետաքրքրական վէպեր։ Երկրորդը—Վալտեր Բիչանդը, որ արդարև, եթէ ոչ առաջնակարգ, բայց շատ նշանաւոր իր գրած գրքերի բովանդակութեամբ։ Երրորդը յայտնի Ուարդը և այլն։—Նշանաւոր է այն երևոյթը, որ ժամանակակից անգղիական ամենանշանաւոր և միանգամայն ամենախելացի գրող Ջորջ Մերիդիտը, որի դրուագները տաղտկալի կարող են երևալ սովորական վէպեր կարդացողների համար, ոչ մի ձայն չստացաւ։

Ամերիկական մի լրագիր դիմեց մի շարք քիչ շատ նշանաւոր Ամերիկացիներին հետևեալ հարցով՝ «Ի՞նչ կարծիք ունիք դուք կանանց մասին»։—Առաջին դործերի նախարար Բլէնը պատասխանեց, թէ անտանելի են իրան այն կանայք, որոնք խառնուում են քաղաքականութեան մէջ և ճառեր են արտասանում միտինգներում, սակայն կանացի յատկութիւններով օժտուած կինը ամենաազնիւ և թանկագին գանձ է աշխարհիս վրայ։

Նոյն կարծիքը յայտնեց կանանց մասին յայտնի Ամերիկական առեներսօս Դէպլիւն։—Վաշինգտոնի ճարպիկ քաղաքագէտներից մէկը, Գալստէտը յայտնեց, որ կանայք, բացի ֆիզիքական աշխատանքներից, մնացած բաներում գերազանցում են տղամարդկանց։—Հանպեր Չենըլի Կլեկը յայտնեց, որ կանայք բացի ֆինանսական և առևտրական գործերից—ամեն բանի պէտք կարող են գալ։ Ամերիկական յայտնի ազատամիտ հրապարակախօս Ինգերսօլը նկատեց, որ կանանց թոյլ կողմերը հէնց նրա համար է այդպէս նկատւում, որ նրանք (կանայք) իրանց զօրեղ կողմերով շատ բարձր են մարդկանցից։ Աֆրիկայի խորքերի հերոս Ստենլին, որ միշտ չափազանց անտարբերութիւն էր ցոյց տալիս դէպի կանայք (երևի իր Նոր ամուսնութեան ազդեցութեան տակ) յայտնեց, որ երբէք չի տեսել կանանց մէջ՝ սկսած արևարդարձային Աֆրիկայի նեգրոսուհիներից մինչև Նիւրկի ձիւնափայլ աստուածուհիները, ոչ մէկը, որ յայտնի չլինէր իր վիպական խանդով, որով թարմացնում են յուսահատուող աշխատաւորների կեանքը, մեղմացնում կատաղած սրտերը, և կեանք շնորհում հանգչող ոյժերին։ Սակայն վիպասան Ստիվենսոնը ուղղակի յայտնումէ, որ նա երբէք չի կարողացել տանել կանանց, գուցէ այն պատճառով, ինչպէս ինքը գրում է, որ նա չէ կարողացել ճանաչել նրանց։

Գերմանական մամուլը դիմում է մի խումբ վիպասանների և գիտնականների մի հարցով, որ շատ մօտ կապ ունի իւրաքանչիւր գերմանացու հետ, և որ չի կարող եօլայ գնալ առանց գարեջրի և ծխախոտի.—արդեօք նոքա ծխողների կողմն են, թէ հակառակ են այդ բանին։ Առանց բացառութեան դրեթէ բոլոր բանաստեղծները (ինչպէս Դանը, Կելլերը, Գէյգեն, Բոդենշտեդտը և այլն) կարծիք յայտնեցին՝ի նպաստ ծխախոտի, թէև մեծամասնութիւնը նոցանից դիտակցում է այն վնասակար ազդեցութիւնը, որ թողնում է ծխախոտը մարմնի գործարանների վրայ։ Ամենքից հետաքրքիր է՝ օրերս վախճանուած աւստրիական բանաստեղծ Անցենգրուբերի կարծիքը, որ հետևեալն է ասում։ «Ծխախոտի գործածութիւնը հասարակական ամենազգուելի մի յանցանք է։ Բայց պիտի խոստովանել, որ ես այդ կատարում եմ թէ աշխատութեան և թէ հանգստի ժամանակ, մեծ ոգևորութեամբ։—Բոլոր գիտնականները բացարձակապէս կարծիք յայտնեցին ծխելու դէմ։—Վիէննայի հռչակաւոր բժշկապետ Բիլրոտը սաստիկ բողոք է յայտնում ներկայ հասարակութեան այն բուռն ցանկութեան դէմ, որ նա ցոյց թէ տալիս դէպի ալքոհոլը և նիկոտինը, ու գուշակում է որ եկող սերնդի մէջ սաստիկ զարգացած կլինին ջղային հիւանդութիւնները։—Գալէի քիմիայի պրոֆեսօր Գարնակը մանրամասն կերպով հաղորդում է իր ստացած տպաւորութիւնները թէ ծխելու ժամանակ և թէ այնուհետև, երբ թողել էր ծխելը։ Նա կարծում է որ ծխելու վատ հետևանքները մասամբ փոխարինում են այն օգուտով, որ նա տալիս է առողջապահական տեսակէտից։

Թէպէտ և գրաֆ Լ. Ն. Տալստոյին չէր մասնակցում այդ ձայնատուութեանը, բայց և այնպէս գերմանական գիտնականներից և ոչ մէկը այնպէս խիստ կարծիք չըյայտնեց ծխելու դէմ, ինչպէս «Վօյնա ի Միր»-ի հեղինակը իր գրած մի յօդուածում, որ լոյս տեսաւ «Contemporary Revisw», փետրվարի համարում. «Գինի խմելու և ծխախոտ ծխելու էտիկան—բարոյագիտութիւնը»։

Գերմանացիք ծխելու և արբեցողութեան մէջ ֆիզիքական վնասն են ցոյց տալիս, իսկ գրաֆ Տալստոյն ապացուցանում է, որ ոչ պակաս բարոյական վնասներ են առաջ գալիս նոյն պատճառներից։ Նորա կարծիքով մարդկութիւնը, պատմական բոլոր ժամանակամիջի ընթացքում, երբէք այնքան անմոռաց չի թողել իր խմմտանքի ձայնը, որքան այժմ։ Կարծես թէ մարդկութիւնը մեր օրերում կաշկանդուած է մի բանով, այդ արդելում է յառաջադիմութեան, և այն դրութեան հասնելուն, որ նրան իրաւամբ պատկանում է։ Դրա պատճառը այն է, որ մարդկութեան մեծամասնութիւնը սովորութիւն ունի լռեցնել իր խղճի ձայնը ալքոհոլով և ծխախոտով...Խղճի ձայնը լռեցնելուց զատ ուրիշ կերպ չի կարելի բացատրել, ըստ Տալստոյի, գինու և ծխախոտի գործածութեան ընդհանուր սովորութիւնը և այլն և այլն։

Ոչ միայն խմում և ծխում են բոլոր չանցաւորները և անբարոյականները, ոչ թէ միայն զոհա ազդեցութեան տակ գործում են զանազան տեսակ չանցանքներ, բայց և այն մարդիկ, որ խմում են մի բաժակ գինի և մի ծխախոտ են ծխում, գործում են միևնոյն նպատակով—նսեմացնել գիտակցութիւնը և լռեցնել խղճմտանքի ձայնը։—Այդ ապացուցանելու համար, հեղինակը բերում է իր սեփական օրինակը, թէ ինքը ծխախոտ գործածելու ժամանակ, դիմում էր ծխելուն միայն այն դէպքերում, երբ կամենում էր մի որևէ անախորժ բան մոռացութեան տալ, շարունակել թղթախաղը, թէև ինքը լաւ էր գիտակցում, որ տարուել է իր կարողութիւնից աւելի, և այլն։ Թէ մինչև որ աստիճան ծխելը կարող է սպանել խիղճն, Տալստոյի խօսքերով ապացուցում է նրանով, որ ծխողը առանց մտածելու թիւնաւորում է այն սենեակի օդը, որտեղ կան կանայք և երեխայք, այն ինչ նա երբէք չէր ցանկանայ նոյն սենեակը ջրասոյզ անել կամ լցնել մի որևէ գարշահոտութեամբ։—Ինչ վերաբերում է այդ ընդհանրութեան համար անհրաժեշտ է դարձած բաների գործադրութեան հետևանքին, Տալստոյն մատնանիշ է անուն այն փաստի վրայ, որ քաղաքական կառավարչական, գիտնական, գրականական, և արուեստագիտական ներկայ առաջնորդող ոյժերը (անձնաւորութիւնները), գործում են անգիտակցական դրութեան մէջ, որովհետև անգամ քիչ ծխող և խմող մարդիկ գտնւում են անբնական դրութեան մէջ։—Ուրիշ կերպ չի կարելի բացատրել, հեղինակի կարծիքով, այն օրինակ անկարելի գործողութիւնները, որպիսին Էյֆէլեան աշտարակի շինութիւնն է, կամ այն երևոյթը, որ այսօր ամբողջ եւրոպան ներկայանում է մի պատերազմական բանակ։ Այդպէս չէին կարող վարուել խելքը բոլորովին գլխին մարդիկ, և այդ օրինակ արարքները բնական են միայն այն մարդկանց, որոնք միշտ ապրում են հակառակ իրենց խղճմտանքի, որին թմրեցնում են գինով ու ծխախոտով։

ՋԱՆԱՋԱՆ

Ի՞նչ է մտածում էլեփոտոծը։ Figaro-ում Միշել Դելին նկարագրում է մի հետաքրքիր փորձ, որ արել է Բելգիացի նկարիչ Վիրցը մի աւազակի կտրուած գլխի վրայ։

Վաղուց ի վեր նկարչին զբաղեցնում էր մի հարց, թէ արդեօք որքան ժամանակ է տևում կախելու տևողութիւնը նոյն իսկ չանցաւորի համար և ի՞նչ է զգում դատապարտուածը իւր կեանքի վերջին րոպէին։ Ի՞նչ է մտածում և զգում մարմնից բաժանուած գլուխը և ընդհանրապէս կարող է արդեօք նա մտածել և զգալ թէ ոչ։ Նկարիչ Վիրցը շատ լաւ ծանօթ էր Բրիւսսելի բանտի բժշկի հետ, որի բարեկամ բժիշկ Դ. երեսուն տարուց աւելի պարապում էր քնարբութեամբ (հիպնօտիզմով)։ Նկարիչը յայտնեց իւր խիստ ցանկութիւնը՝ այն է ենթարկուել քնարբութեան այն մտքով, այսինքն համոզուել, որ ինքը գլխատման դատապարտուած չանցաւոր է։ Բժիշկը, որ շատ անգամ քնեցրել էր Վիրցին և ճանաչում էր նրան իբրև յայտնի ոգեմիջնորդ (մէդիում), համաձայնուեցաւ և խոկոյն սկսեց պատրաստութիւններ տեսնել։

Իրան ղերը լաւ սովորած լինելու համար, Վիրցը աւազակին գլխատելուց մի քանի օր առաջ, գնաց բժիշկ Դ. հետ այնտեղ, ուր գտնվում էր գլխատման մեքենան։ Այստեղ բժիշկը մի քանի փորձերից յետոյ, քնեցրեց նկարչին և հրամայեց նրան խօսակցութիւն բանալ զանազան անձնաւորութիւնների հետ, կարդալ նրանց մտքերը, թափանցել նրանց խղճի և հոգու մէջ և այդպիսով իմանալ նրանց յուզուած զգայմունքները։ Գլխատման օրը, չանցաւորի գալուց տասը րոպէ առաջ Վիրցը, բժիշկ Դ. և երկու վկայ զետեղուեցան գլխատման մեքենայի տակը այնպէս, որ չը նկատուեն հասարակութիւնից։ Բժիշկ Դ. քնեցրեց իւր ոգեմիջնորդին, համոզեց նրան խօսակցութիւն բանալ չանցաւորի հետ, հետևել նրա բոլոր մտքերին և զգացմունքներին և բարձրաձայն յայտնել դատապարտուածի մտքերը այն րոպէին, երբ կացինը կը մօտենայ նրա պարանոցին։ Վերջապէս նա հրամայեց քնարբածին մտնել չանցաւորի ուղեղի մէջ այն ժամանակ, երբ գլուխը կը բաժանուի մարմնից և մանրամասը գննել մեռնողի վերջին մտքերը։ Վիրցը խոկոյն քնեց։ Մի րոպէից յետոյ լսուեցաւ ոտքի ձայն։ Դա դահիճն էր, որ ներս էր բերում չանցաւորին։ Նրան պարկացրին սեղանի վրայ գլխատման մեքենայի կացնի տակ։ Այստեղ Վիրցը, յանցուելով սկսեց աղաչել, որ իրան զարթացնեն, որովհետև իրան փորձած սարսափը անտանելի է։ Բայց արդէն ուշ էր։ Կացինն ընկնում է։ «Դուք ինչ էք զգում, դուք ինչ էք տեսնում», հարցնում է բժիշկը։ Վիրցը ծանրովում է ցնցումների մէջ և հառաչելով պատասխանում է։ «Կայծակի հարուածի, ախ, սարսափելի է... Նա մտածում է, նա տեսնում է...»։—Ո՞վ է մտածում, ո՞վ է տեսնում»—Գլուխը... Նա սարսափելի կերպով չարչարվում է... Նա զգում է, մտածում է, նա չէ հասկանում, թէ ինչ է պատահել... Նա որոնում է իւր մարմնին... Նա կարծում է, որ մարմինը կը որոնէ իրան... Նա սպասում է վերջին հարուածին—մահուան... Բայց մահը չէ մօտենում... Այս սարսափելի խօսքերը արտասանելու ժամանակ, այս տեսարանին վկայ եղողները նայում էին մահապարտի գլխին, կախուած մազերով, սեղմուած ատամներով, բաց աչքերով և բերանով։ Զարկերակները դեռ գործում էին կացնի տուած հարուածի տեղը։ Արեան հեղեղը պատում էր չանցաւորի դէմքը։ Վիրցը շարունակում էր աղաղակել քնարբութեան մէջ. «Ինչ-որ մի ձեռք սեղմում է ինձ, մի ահագին և անխիղճ ձեռք։ . . Ա՜խ, այս ճանրութիւնը հոգիս կը հանէ։ Կարմիր խնձորը ճաճկում է աչքերս... Բայց ես կազատուեմ արդեօք այս անիծուած ձեռքից։ Իզուր է, ես ոչ չունիմ նրան հեռացնելու ինձանից... Այս ինչ է։ Ինձ պատում է արիւնը։ Կտրուած գլուխ եմ...»

Բժիշկը շարունակում էր հարցնել. «Ի՞նչ էք տեսնում, դուք որ էք»—Ես թռչում եմ անչափելի տարածութեան մէջ. . . Մ՛իթէ ես մեռայ։ Մ՛իթէ ամեն բան վերջացած է։ Ո՜հ եթէ ես կարողանայի միանալ մարմնիս հետ։ Մարդի՛կ, խնայեցէ՛ք ինձ, տուէ՛ք ինձ իմ մարմինը։ Այն ժամանակ ես կապրի՛մ... Ես դեռ մտածում եմ, զգում եմ, ես բոլորը յիշում եմ... Ահա կանգնած են դատաւորներս կարմիր վերարկուներով... Ես լսում եմ վճիռս... Դժբաղդ կինս, խեղճ իմ երեխա՛յ։ Ո՛չ, ո՛չ դուք չէք սիրում ինձ, դուք թողնում էք ինձ... Եթէ դուք կամենայի՛ք ինձ մարմնիս հետ միացնել, ես կարող էին դեռ ապրել ձեզ հետ... Ո՛չ, դուք չէք ուզում... Բայց և այնպէս ես ձեզ սիրում եմ, խեղճ իմ կի՛ն և երեխա՛յ։ Թոյլ տուէ՛ք ինձ ձեզ գրկախառնելու... Ի՞նչպէս, զաւակս, դու սարսափած աղաղակե՞մ ես։ Ո՛հ դժբաղդս, ես շաղախեցի արիւնով քո փոքր ձեռքերդ։ Արդեօք երբ պէտք է այս բոլորը վերջանայ։ Մ՛իթէ մեղաւորը դատապարտուած է յաւիտենական տանջանքի»։

Վիրցի արտասանած այս խօսքերից յետոյ, ներկայ եղողներին այնպէս երևաց, իբր թէ մահապարտի աչքերը բաց եղան և նայեցին իրանց վրայ, արտայայտելով նրանց իր անպատմելի չարչարանքը և խիստ աղաչանքը։ Նկարիչը շարունակում էր. «Ո՛չ, ո՛չ, չարչարանքները երկար չեն կարող տևել, Աստուած ողորմած է... Բոլոր երկրայինը անցնում է աչքերիցս... Հեռուում ես տեսնում եմ ադամանդի նման փայլող մի աստղ... Ա՜խ, որքան լաւ պէտք է լինի այն տեղ, բարձրում։ Ինչ որ մի ալիք բարձրացնում է ինձ... Ո՛հ, ինչ խորը կը քնեմ ես այժմ... Ո՛հ, ի՞նչ երջանկութի՛ւն»։

Սրանք էին քնարբածի վերջին խօսքերը։ Այժմ նա խորը քնած էր և չէր պատասխանում բժշկի հարցերին։ Բժիշկ Դ. մօտեցաւ չանցաւորի կրուած գլխին և նայեց նրա ճակատը, քունքերը, ատամները։ Ամեն բան սպառել. գլուխն էլ մեռել էր։

Համաշխարհային ուսանողական վերաբերեալ վերջին հնգամեակի վիճակագրական տեղեկութիւններն աչքի առաջ ունենալով պրօֆ. Կօնրադը կազմել է հետևեալ ցուցակը, որ ցոյց է տալիս թէ եւրոպական երկիրներում 100,000 բնակչի վրայ որքան ուսանող է գալիս.

Բելգիայում	100,000	բնակչի	վրայ	82 ուսանող
Նորվեգիայում	»	»	»	76 »
Շվեցիայում	»	»	»	57 »
Աւստրիայում	»	»	»	55 »
Շուիցերիայում	»	»	»	55 »
Իտալիայում	»	»	»	51 »
Գերմանիայում	»	»	»	48 »
Դանեմարքում	»	»	»	47 »
Հոլլանդիայում	»	»	»	45 »
Ֆրանսիայում	»	»	»	42 »
Ռուսաստանում	»	»	»	9 »

Խմբագիր՝ ԱՐԳՈՒՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

Տնօրէն՝ Ն. ՅԱՐՈՅ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ

Փ. ՎԱՐԴԱՆԵԱՆԻ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՄԲ

1) Ուբքէաղ, վոքրերի համար, կոմս Լ. Տօլստոյի «Ясная Поляна»-ից. . . — 20 կ.

2) Կոլոմբ, վոքրերի համար, նոյն հեղինակի . . — 15 կ.

3) Բեռնրնէ, վէպիկ, Հայդէի . — 30 կ.

Կեն դրոնական գրավաճառանոցում վաճառվում են պ. ՇԻՐՎԱՆԶԱԴԻԻ հետևեալ վէպերը և վէպիկները

Ռ. Կ.

1) «ԳՈՐԾԱԿԱՏԱՐԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ և ՀՐԻԱՀ ՆԱԻԹԱԳՈՐԾԱՐԱՆՈՒՄ»

Գինն է . . . . . — 50

Ձանապարհիձախսով . . . . — 65

2) «ԽՆԱՄԱՏԱՐ և ՆՈՐԵՐԻՑ ՄԷԿԸ»: Գինն է. . . . . — 50

Ձանապարհածախսով . . . . — 65

3) «ՆԱՄՈՒՍ»: Գինն է. . . 1 —

Ձանապարհածախսով 1 25

4) «ԱՐԱՄԲԻՆ»: Գինն է. . . — 75

Ձանապարհածախսով . . . . 1 —

5) «ՋՈՒՐ ՅՈՅՍԵՐ»: Գինն է . 1 —

Ձանապարհածախսով 1 25

Կարելի է ուղղակի դիմել և հեղինակին Тифлисъ—*Ширванзадэ*

ՀԱՆԳԻՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ԲԱՐՈՅԱԿԱՆ-ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ-ԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

Բաժանորդագինն է 10 ֆր. (4 ռո-բլի):

Հասցէն՝ Rédaction de la Revue „HANTESS“. a Vienne (Autriche) VII. Mechitharistengasse. 4.

ԱՐԱՐԱՏ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

Բաժանորդագինն է 4 ռո-բլի

Հասցէն՝ Вагаршапатъ Редакція „*Арарата*“.

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ՇԻՐՎԱՆԶԱԴԻԻ

ՋՈՒՐ ՅՈՅՍԵՐ

ՎԷՊ

ԳԻՆՆ Է ԹԻՓԼԻԶՈՒՄ 1 Ռ.:

Ձանապարհածախսով 1 ռուբլի 25 կոպէկ:

Վաճառվում է հեղինակի մօտ:

Тифлисъ, Ширванзадэ.

ԹԻՓԼԻԶԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՄԲ

Լ . : Լ . Ի

ՖԵՐԴԻՆԱՆԴ ՇՄԻԴՏԻ

ՆԱԼ ԵՒ ԴԱՄԱՅԵԱՆԹԻ

ՀՆԴԿԱԿԱՆ ԱՌԱԿԸ

Գերմ. Թարգմանեց Յովհաննէս Լալայեանց

ԳԻՆՆ Է 20 ԿՈՊԷԿ

Վաճառվում է կենդրոնական գրավաճառանոցում:

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿՆ Է

ԵՒ ՇՈՒՏՈՎ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՄՆԷ

ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՄԲ

ՍԱՀԱԿ ՔԱՀԱՆԱՅ ՍԱՀԱԿԵԱՆԻ

ՀԻՆ—ՈՒԽՏԻ

ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Երկրորդ տպագրութիւնը

ԲԱՐԵՓՈՓՈՒԱԾ ԵՒ ՔԱՐՏԻԶՆԵՐՈՎ ՋԱՐԴԱՐԱԾ

„ՐՕՍԻԱ“

ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՌՈՒՀՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ 1881 Թ. ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ, ՄԵԾ ՄՕՐՍԿԱՅԱՆ № 13.

ՀԻՄՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄԱԳԼՈՒԽԸ 11,000,000 ՌՈՒԲԼԻ

ԿԵՑՆՔԻ ԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆ

Ձեռնտու պայմաններով և ապահովողների մասնակցութեամբ ընկերութեան շահերին

ԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆ ԴԺԲԱԽՏԻ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻՑ

Ինչպէս առանձին անձինքների, նոյնպէս և հաւաքական ապահովութիւն դորձարաններում ծառայողների և բանուորների,—ապահովութեան վճարների կրճատումով պրեմիդենտի շնորհիւ։

ԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆ ՀՐԴԵՒԻ ԴԷՄ

Ամենայն տեսակ շարժական և անշարժ գոյքերի

ԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆ ՏՐԱՆՍՊՕՐՏՆԵՐԻ

ԳԵՏԱՅԻՆ, ՑԱՄՔԱՓԱՅԻՆ ԵՒ ԾՈՎԱՅԻՆ.

Այն անձինքը, որոնք կամենում են ապահովել կամ զանազան տեղեկութիւններ ստանալ պէտք է դիմեն Վարչութեանը Պետերբուրգում (Մեծ Մօրսկայա, № 13) կամ գործակալ Վ. Լ. Պօտկովին և Է. Ֆ. Փօլդֆարբին Թիֆլիզում (Սօլօլակի փող. տուն իշխան Մելիքօվի, № 10). և կամ գաւառական քաղաքներում գտնուող գործակալներին։

Երկաթուղիներով և շոգենաւերի վրայ ճանապարհորդողներին դժբաղդ պատահարների դէմ ապահովելու տոմսակները կարելի է նոյնպէս ստանալ երկաթուղու կայարաններում, շոգենաւերի դրասենեակներում և Ռուսաստանի քաղաքների գլխաւոր հիւրանոցներում։ Ամենայն տեսակ բրոշիւրներ ուղարկվում են պահանջողներին ձրիաբար։

(17—25)

Ոսկեայ մեդալ

ՆԻԿՈՂԱՅՈՍ

ԲՕԶԱՐՃԵԱՆՑ

Ոսկեայ մեդալ

ԾԽԱԽՈՏԻ ԳՈՐԾԱՐԱՆԸ ԹԻՖԼԻԶՈՒՄ

Առաջարկում եմ պ. պ. յանկացողներին ընտիր ծխախոտն և պապիրոսները իմ գործարանի, որ ունի Տաճկական և տեղական ընտիր և թարմ ծխախոտների պաշար։ Պատուէրները կատարվում են գործածողների ճաշակի համեմատ և ճշտութեամբ։ Իմ մագազինում կան ծխելու համար ամենալաւ գործիքներ և առարկաներ։ Օտար քաղաքներից ստացուած պատուէրները կատարվում են անյապաղ։

Գործարանիս գլխաւոր մագազինը գտնվում է Փվօրցօվայեա փողոցում Թիֆլիզի ազնուականների բանկի, նախկին Արծրունու, քարվանսարայում։

20—28.

ԼՕՅՍ ՏԵՍԱԾ

ԱՂԼՈՒԽՔԻ ՔԱՏՈՒՐԵԱՆԻ

ՀԱՆԱՄՏԵՂՈՒԹԻՒՆԵՐԸ

ԴԻՆՆ Է 50 ԿՈՊԵԿ

Ձանապարհածախսը 60 կոպէկ։ Ձանկացողները դիմում են հեղինակին հետևեալ հասցէով.

Москва. Газетный переулокъ, домъ Лаптевой въ Типографіи *Виргольдтъ*.

ՀԱՅԵՐԷՆ—ՌՈՒՍԵՐԷՆ

ԲԱՌԱՐԱՆ

Մամուլի տակ է և մօտաւորապէս եկող ամսուայ վերջին լոյս կը տեսնի վերոյիշեալ աշխատութիւնը։ **ՀԱՅԵՐԷՆ—ՌՈՒՍԵՐԷՆ ԲԱՌԱԳԻՐՔԸ** արդի աշխարհաբար լեզուով բառարան է, բաղկացած կը լինի 18—20 in 32⁰ տպագրական թերթերից (576—640 երկսիւնեակ երես, մանր № 8 տառերով 43-ական տող ամեն մի սիւնակը)։ Բառարանի յառաջաբանը կը լինի Հայոց լեզուի քերականութեան համառօտ սկզբունքները։

Բաժանորդագրութիւնը (Թիֆլիսի կենդր. գրաւաճ. և նորա գործակալների միջնորդութեամբ։ Թիֆլիսում մէկ րուբլի է, իսկ ճանապարհածախքը հետը 1 ր. 25 կ.։ Լոյս տեսնելուց յետոյ «**ՀԱՅԵՐԷՆ—ՌՈՒՍԵՐԷՆ ԲԱՌԱՐԱՆԸ**» կ'արժէ երկու րուբլի։

Այժմ դուրս է եկել 18 թերթ։ «**ՀԱՅԵՐԷՆ-ՌՈՒՍԵՐԷՆ ԲԱՌԱՐԱՆԸ**» աշխատասիրել է **ԿԱՐԱՊԵՏ ԵԱՂՈՒԲԵԱՆՑԸ**, մի քանի մասնագէտների օգնութեամբ։

Բաժանորդագրութիւնը շարունակվում է մինչև ապրիլի մէկը, որից յետոյ այլ ևս ոչ մի բաժանորդ չի ընդունուի։

+

Дозволено цензурою, Тифлисъ, 12 апрѣля 1891 г. Տպարան Ց. Մարտիրոսեանցի։ Типографія И. Мартиросіанца Орб. ул , д. № 1—2